

«Կամար բիզնես սենթր» ՓԲԸ

**Ֆինանսական հաշվետվությունների միջազգային
ստանդարտներին համապատասխան՝
Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորական եզրակացություն**

31 դեկտեմբերի 2024թ.

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն

Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	1
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն	2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1	Ընդհանուր տեղեկություններ «Կամար Բիզնես Սենթր» ՓԲԸ -ի և նրա գործունեության մասին	5
2	Ընկերության գործառնական միջավայրը	5
3	Պատրաստման հիմունքները	6
4	Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական գնահատականներ և դատողություններ	15
5	Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին	18
6	Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ	19
7	Հիմնական միջոցներ	22
8	Ներդրումային գույք	22
9	Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	24
10	Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	25
11	Բաժնետիրական կապիտալ	25
12	Վարկեր և փոխառություններ	25
13	Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորությունների համեմատություն	26
14	Պարտավորությունների և ծախսերի գծով պահուստներ	26
15	Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	28
16	Վարձակալական դեպոզիտներ	28
17	Վարձակալական եկամուտ	28
18	Եկամուտները և ծախսերը ըստ բնույթի	28
19	Ֆինանսական ծախսեր	29
20	Ֆինանսական եկամուտ	30
21	Շահութահարկ	30
22	Պայմանական դեպքեր և պարտավորություններ	31
23	Ֆինանսական ռիսկերի կառավարում	32
24	Կապիտալի կառավարում	36
25	Իրական արժեքի բացահայտումներ	36
26	Ֆինանսական գործիքների ներկայացում ըստ չափման կատեգորիաների	38
27	Փոխկապակցված կողմերի հետ մնացորդներ և գործարքներ	39
28	Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր	40



Անկախ աուդիտորական եզրակացություն

«Կամար Բիզնես Սենթր» ՓԲԸ ղեկավարությանը և բաժնետերերին:

Մեր կարծիքը

Մեր կարծիքով, կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Կամար Բիզնես Սենթր» ՓԲԸ (այսուհետ՝ «Ընկերություն»)
ֆինանսական վիճակն 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև Ընկերության նույն
ամսաթվին ավարտված տարվա՝ ֆինանսական արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը՝
համաձայն ՀՀ ՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներին:

Աուդիտի առարկան

Մենք աուդիտի ենք ենթարկել Ընկերության ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են.

- ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունն՝ առ 2024թ. դեկտեմբերի 31-ը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, և
- ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման էական քաղաքականության տեղեկատվություն և այլ բացատրական տեղեկատվություն:

Կարծիքի հիմքը

Մենք աուդիտին անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք կարծում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Անկախություն

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից թողարկված՝ Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտների) («ՀԷՄՍԻ Վարքագիր») սկզբունքների: Մենք կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջներին և ՀԷՄՍԻ Վարքագրին համապատասխան:

«Փրայատըթերհաուս Գուպերս Արմենիա» ՍՊԸ

ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Մարգարյան 2, «Կամար» բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ

Հեռ.՝ (37410) 512151, ֆաքս՝ (37410) 521000, www.pwc.com/am

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Շնկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի հումքը լուծարելու կամ Շնկերության գործունեությանը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Շնկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝ առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները՝ ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալների հետևանքով առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կբացահայտի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով, և համարվում են էական, երբ ողջամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կարող են ազդեցություն ունենալ օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի մաս, աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- որոշում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումների ռիսկը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր աուդիտորական կարծիքը արտահայտելու համար: Խարդախության հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացում կամ ներքին հսկողության չարաշահում:

- ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե ԸՆկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել ԸՆկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մենք պարտավոր ենք մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևավորել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են հանգեցնել նրան, որ Խումբը դադարեցնի անընդհատության սկզբունքով գործունեությունը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, այդ թվում՝ բացահայտումները և այն, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են հիմնական գործարքներն ու դեպքերն այնպես, որ ապահովվում է ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

5. 
Նին Կարապետյանի
Տնօրեն



30 հունիսի 2025թ.

Երևան, Հայաստանի Հանրապետություն

PricewaterhouseCoopers Armenia LLC

«Կամար բիզնես սենթը» ՓԲԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Ներդրումային գույք	8	18,257,034	17,502,230
Հիմնական միջոցներ	7	70,043	110,949
Ներդրումներ բաժնային արժեթղթերում		87,834	83,627
Կանխավճարային ծախսեր		16,441	16,786
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		18,431,352	17,713,592
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ		117,228	57,869
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	9	237,881	197,875
Տրամադրված վարկեր		-	80,047
Փոխհատուցվող ակտիվ	14	1,214,689	1,214,689
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	10	28,287	201,413
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		1,598,085	1,751,893
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		20,029,437	19,465,485
ՍԵՓԱԿԱՆ ԿԱԴԻՏԱԼ			
Կանոնադրական կապիտալ	11	7,690,270	7,690,270
Զբաղիված շահույթ		7,317,801	6,445,258
Պահուստային կապիտալ		1,153,540	-
Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող արժեթղթերի վերագնահատման պահուստ		9,341	1,083
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱԴԻՏԱԼ		16,170,952	14,136,611
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարձակալական դեպոզիտներ	16	678,434	643,346
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	15	34,176	125,387
Հետաձգված հարկային պարտավորություն	21	1,565,248	1,296,155
Վարկեր և փոխառություններ (ոչ ընթացիկ)	12	-	1,593,934
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		2,277,858	3,658,822
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	12	-	130,563
Վարձակալական դեպոզիտներ	16	-	16,373
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	15	102,618	97,546
Հետաձգված հասույթ		77,542	71,369
Շահութահարկի գծով կրեդիտորական պարտք		113,870	74,391
Պահուստներ	14	1,286,597	1,279,809
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		1,580,627	1,670,051
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		3,858,485	5,328,873
ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱԴԻՏԱԼ		20,029,437	19,465,484

Հաստատվել է հրապարակման և ստորագրվել է 2025 թ. հունիսի 30-ին:

Արթուր Դավթյան
 Տնօրեն



Տաթևիկ Սողոմոնյան
 Գլխավոր հաշվապահ

«Կամար բիզնես սենթը» ՓԲԸ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	2024թ.	2023թ.
Վարձակալական եկամուտ	17	2,381,755	2,242,054
Գույքի շահագործման ծախսեր	18	(306,020)	(297,852)
Զուտ վարձակալական եկամուտ		2,075,735	1,944,202
Եկամուտ պաշարների վաճառքից		-	8,849
Պաշարների վաճառքի ինքնարժեք		-	(6,720)
Զուտ եկամուտ պաշարների վաճառքից		-	2,129
Այլ եկամուտներ	18	10,165	10,070
Ներդրումային գույքի իրական արժեքի փոփոխություն	8	754,804	380,665
Վարչական ծախսեր	18	(366,945)	(385,039)
Ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստների վերականգնում	14	-	93,072
Այլ օգուտ/(վնաս), զուտ	18	(12,723)	(5,823)
Գործառնական շահույթ		2,461,036	2,039,276
Ֆինանսական եկամուտ	20	71,767	5,794
Ֆինանսական ծախսեր	19	(68,096)	(242,850)
Շահույթ նախքան հարկումը		2,464,707	1,802,220
Շահութահարկի գծով ծախս	21	(438,624)	(333,833)
ՏԱՐՎԱ ՀԱՅՈՒՅԹ		2,026,083	1,468,387
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք		8,258	1,083
ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՊԱՐԹԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԸ		2,034,341	1,469,470

«Կամար բիզնես սենթր» ՓԲԸ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազ. ՀՀ դրամ	Կանոնադրական կապիտալ	Պահուստային կապիտալ	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող արժեթղթերի վերագնահատման պահուստ	Զբաղիված շահույթ	Ընդամենը
Մնացորդն առ 1 հունվարի 2023թ.	7,690,270		-	4,976,871	12,667,141
Տարվա շահույթ	-	-	-	1,468,387	1,468,387
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	1,083	-	1,083
Ընդամենը 2023թ. համապարփակ ֆինանսական արդյունք	-		1,083	1,468,387	1,469,470
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2023թ.	7,690,270		1,083	6,445,258	14,136,611
Տարվա շահույթ	-	-	-	2,026,083	2,026,083
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունք	-	-	8,258	-	8,258
Ընդամենը 2024թ. համապարփակ ֆինանսական արդյունք	-		1,083	1,468,387	1,469,470
Զբաղիված շահույթի փոխանցում պահուստային կապիտալին	-	1,153,540	-	(1,153,540)	-
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2024թ.	7,690,270	1,153,540	9,341	7,317,801	16,170,952

«Կամար բիզնես սենթր» ՓԲԸ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	2024թ.	2023թ.
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Շահույթ նախքան հարկումը		2,464,707	1,802,220
<i>Ճշգրտումներ.</i>			
Սաշվածություն և ամորտիզացիա	7	43,814	44,758
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/(վնաս)	18	11,755	(2,351)
Ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող պարտքային կորուստների վերականգնում		-	(93,072)
Ֆինանսական եկամուտ	20	(71,767)	(5,794)
Ֆինանսական ծախսեր	19	68,096	242,850
Ներդրումային գույքի իրական արժեքի չափումից օգուտ	8	(754,804)	(380,665)
Ներդրումային գույքի վաճառքից զուտ վնաս	8	-	4,716
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր նախքան շրջանառու կապիտալի ճշգրտումները		1,761,801	1,612,662
Փոփոխություն առևտրային և այլ դեբիտորական պարտքերում		(1,491)	(394)
Փոփոխություն պաշարներում		(59,361)	(18,722)
Փոփոխություն կանխավճարային ծախսերում և ԱՄՀ գծով դեբիտորական պարտքերում		(39,661)	23,571
Փոփոխություն հետաձգված հասույթում		6,379	(21,700)
Փոփոխություն առևտրային և այլ կրեդիտորական պարտքերում		18,715	36,909
Փոփոխություն վարձակալական դեպոզիտներում		(68,354)	14,749
Փոփոխություններ շրջանառու կապիտալում		1,618,028	1,647,075
Վճարված շահութահարկ		(130,052)	(151,133)
Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ		1,487,976	1,495,942
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Հիմնական միջոցների ձեռքբերում		(25,442)	(30,597)
Հիմնական միջոցների օտարում		109	-
Բաժնային արժեթղթերի օտարում իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով		2,625	-
Կապակցված կողմին տրամադրված վարկեր		(527,000)	(1,389,700)
Կապակցված կողմերից վարկերի մարումների ստացում		607,000	1,309,700
Ստացված տոկոսագումարներ		3,444	6,911
Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ		60,736	(103,686)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Վարկերի և փոխառությունների մարում		(1,593,881)	(1,230,094)
Վճարված տոկոսներ և այլ վճարներ		(119,134)	(171,592)
Ֆինանսական գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ		(1,713,015)	(1,401,686)
Փոխարժեքային տարբերությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(8,823)	492
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին		201,413	210,351
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին	10	28,287	201,413

5-40 Էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

1 Ընդհանուր տեղեկություններ «Կամար Բիզնես Սենյոր» ՓԲԸ -ի և նրա գործունեության մասին

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան, «Կամար Բիզնես Սենյոր» ՓԲԸ -ի (այսուհետ՝ «Ընկերություն») համար:

Ընկերությունը գրանցվել և իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ՝ «ՀՀ»): Ընկերությունը փակ բաժնետիրական ընկերություն է, որը հիմնադրվել է 2007թ. դեկտեմբերի 10-ին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան:

2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետերերն են Հայաստանի քաղաքացի Գևորգ Նալբանդյանը (51. 3%) և Հայաստանում գրանցված «Զի-ԷՆ» ՍՊԸ-ն (48. 7%): Ընկերության իրական շահառուն Գևորգ Նալբանդյանն է:

Հիմնական գործունեությունը. Ընկերության հիմնական գործունեությունը բիզնես տարածքների վարձակալությամբ տրամադրումն է: 2017թ.-ի նոյեմբերի 1-ի դրությամբ Ընկերությունն ընդհանուր առմամբ ավարտել էր Երևան քաղաքի կենտրոնում բիզնես կենտրոնի կառուցումը և սկսել է իր գործունեությունը:

Իրավաբանական հասցեն և գործունեության վայրը. Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 2:

Ներկայացման արժույթը. Սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը Հայաստանի Հանրապետության դրամն է (այսուհետև՝ «ՀՀ դրամ»), եթե այլ կերպ նշված չէ:

2 Ընկերության գործառնական միջավայրը

Հայաստանի Հանրապետություն. Հայաստանի Հանրապետության տնտեսությունը ցուցաբերում է զարգացող շուկաներին բնորոշ որոշակի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական դաշտը շարունակում է զարգանալ և ենթարկվել հաճախակի փոփոխությունների, ինչպես նաև կարող է ենթակա լինել տարաբնույթ մեկնաբանումների (Ծանոթագրություն 22): Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմը տարբեր ուղղություններով ազդեցություն է ունեցել ՀՀ տնտեսության վրա: Մի կողմից, Հայաստանը դարձել է տասնյակ հազարավոր այցելուների ժամանակավոր բնակության վայր և տնտեսական հետաքրքրությունների եզակի կենտրոն, ինչը, մասնավորապես, լրացուցիչ հնարավորություններ է ստեղծում ֆինանսական գործառնականությունների համար: Ավելին, Ռուսաստանի տնտեսությունում առաջանում են ազատ շուկայական սեգմենտներ, որոնք լայն հնարավորություն են ընձեռում արտահանումը խթանելու և ՀՀ-ից վերաարտահանման գործառնականություններ իրականացնելու համար: Ավելին, Հայաստանի տնտեսական համակարգի վրա միանշանակ ազդում են Ռուսաստանի Դաշնության դեմ կիրառվող պատժամիջոցները: Բացի այդ, Ուկրաինայում Ռուսաստանի պատերազմի ազդեցությունը կարելի է դիտարկել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի հարթություններում: Հայկական արժույթը շարունակել է արժևորվել 2024թ., ինչը հիմնականում պայմանավորված է եղել հայաստանյան շուկա արտարժույթի մեծածավալ փոխանցումներով:

2022թ. սկզբին Հայաստանի տնտեսությունը շարունակել է դրսևորել դրական դինամիկա՝ համաճարակի և Լեռնային Ղարաբաղում պատերազմից հետո վերականգնման ժամանակաընթացքում: Այս միտումը զգալիորեն խթանվել է նաև՝ պայմանավորված Ռուսաստանի և Ուկրաինայի միջև պատերազմի հետևանքով ՌԴ բազմաթիվ քաղաքացիների՝ Հայաստան տեղափոխմամբ: Այս ներհույսը մեծապես խթանել է Հայաստանի տնտեսությունը և նպաստել է խմբի գործունեության զարգացմանը՝ հաշվի առնելով առաջացած բարձր գնողունակությունը և խմբի կողմից վաճառվող կոսմետիկայի տեսականու օգտագործման աճը: Այնուամենայնիվ, 2022թ. դեկտեմբերին Լեռնային Ղարաբաղի շրջափակումը հսկայական բացասական ազդեցություն թողեց Հայաստանի տնտեսական, ինչպես նաև քաղաքական իրավիճակի վրա: 2023թ. սեպտեմբերին Ադրբեյջանի սանձազերծած պատերազմից հետո ավելի քան հարյուր հազար մարդ՝ այսինքն, Լեռնային Ղարաբաղի գրեթե ողջ բնակչությունը, մեկ շաբաթվա ընթացքում արտագաղթեց Հայաստան: Ըստ այդ, որպես տարածաշրջան, Լեռնային Ղարաբաղը Հայաստանի համար j կորուստ հանդիսացավ, այդ թվում՝ ձևավորված տնտեսական կապերի առումով:

2 Ընկերության գործառնական միջավայրը (շարունակություն)

Ֆինանսական շուկաները շարունակում են մնալ անկայուն և բնութագրվում են գների հաճախակի զգալի տատանումներով և առևտրային սփրեդի աճով:

Այս իրադարձությունները կարող են հետագա Էական ազդեցություն ունենալ Ընկերության հետագա գործունեության և ֆինանսական վիճակի վրա, որոնց ազդեցությունը դժվար է կանխատեսել: Ապագա տնտեսական և կարգավորող միջավայրը և դրա ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել ղեկավարության ներկայիս ակնկալիքներից:

3 Պատրաստման հիմունքները

Պատրաստման հիմքը. Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀՄՍԽ կողմից հրապարակված՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՀՀՄՍ») , պահանջներին համապատասխան («ՀՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներ»), սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Սույն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության Էական սկզբունքները ներկայացված են ստորև: Բացի 2023թ. հունվարի 1-ից գործող հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններից, այս քաղաքականությունը հետևողականորեն կիրառվել է ներկայացված բոլոր ժամանակաշրջանների նկատմամբ, եթե այլ բան նշված չէ (տես Ծանոթագրություն 5):

ՀՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար պահանջվում են հաշվապահական հաշվառման Էական գնահատումներ: Բացի այդ, Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ ղեկավարությանն անհրաժեշտ է առաջնորդվել իր դատողություններով: Այն ոլորտները, որոնք ենթադրում են դատողությունների կամ բարդության ավելի բարձր աստիճան, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատականները Էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են Ծանոթագրություն 4-ում:

Արտարժույթի փոխարկում. Ընկերության ֆունկցիոնալ արժույթը Ընկերության հիմնական գործունեության իրականացման տնտեսական միջավայրի արժույթն է: Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և Ընկերության հաշվետվությունների ներկայացման արժույթը ՀՀ ազգային արժույթն է՝ Հայաստանի Հանրապետության դրամը (ՀՀ դրամ):

Գործարքներ և մնացորդներ. Դրամական ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ «ՀՀ ԿԲ») պաշտոնական փոխարժեքով: Գործարքների վճարումները կատարելու և դրամական ակտիվները և պարտավորությունները ՀՀ ԿԲ տարեվերջի պաշտոնական փոխարժեքով Ընկերության ֆունկցիոնալ արժույթի փոխարկելու արդյունքում ստացված՝ արտարժույթի փոխարկումից եկամուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, ֆինանսական եկամուտների կամ ծախսերի կազմում՝ որպես Այլ օգուտ/ (վնաս), զուտ հիմունքով: Տարեվերջի փոխարժեքով փոխարկումը չի կիրառվում ոչ դրամական հոդվածների նկատմամբ, որոնք չափվում են սկզբնական արժեքով: Արտարժույթով արտահայտված և իրական արժեքով չափված ոչ դրամական հոդվածները, ներառյալ բաժնեմասնակցային ներդրումները փոխարկվում են իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ հաստատված փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված և իրական արժեքով չափվող ոչ դրամական հոդվածների վրա արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը գրանցվում է որպես իրական արժեքի շահույթի կամ վնասի մաս:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտարժույթով արտահայտված մնացորդների փոխարկման համար օգտագործվող հիմնական փոխարժեքներն են՝ 1 ԱՄՆ դոլար = 396.56 ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31-ին՝ 1 ԱՄՆ դոլար = 404.79 ՀՀ դրամ), 1 Եվրոպական միության արժույթ («Եվրո») = 413.89 ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31՝ 1 Եվրո = 447.9 ՀՀ դրամ), 1 Ռուսական ռուբլի («ՌԴ Ռուբլի ») 3.71 ՀՀ դրամ (2023թ. դեկտեմբերի 31՝ 1 ՌԴ ռուբլի = 4. 5 ՀՀ դրամ):

Հիմնական միջոցներ. Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումը, եթե վերջինս պահանջվում է:

3 Պատրաստման հիմունքները (շարունակություն)

Հետագա ծախսերը համապատասխանաբար ընդգրկվում են ակտիվի հաշվեկշռային արժեքում կամ ճանաչվում են որպես առանձին ակտիվ, միայն այն ժամանակ, երբ հավանական է, որ հիմնական միջոցների համապատասխան միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն և վերջինիս արժեքը կարող է արժանահավատորեն չափվել: Վերանորոգման և պահպանման գծով ընթացիկ ծախսումները ծախսագրվում են, երբ դրանք տեղի են ունենում: Հիմնական միջոցների միավորների խոշոր հիմնամասերի կամ բաղադրիչների փոխարինման ծախսումները կապիտալացվում են, իսկ փոխարինված մասը դուրս է գրվում:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում ղեկավարությունը գնահատում է, թե արդյոք առկա է հիմնական միջոցների արժեքի նվազման հատկանիշ: Եթե որևէ նման հատկանիշ գոյություն ունի, ղեկավարությունը գնահատում է փոխհատուցվող գումարը, որը որոշվում է որպես հետևյալ երկու արժեքներից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը, և արժեքի փոփոխությունը կորուստը ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում: Նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում ակտիվի համար ճանաչված արժեքի փոփոխությունը կորուստը հակադարձվում է (անհրաժեշտության դեպքում), եթե տեղի են ունեցել գնահատումներում փոփոխություններ, որոնք կիրառվել են՝ որոշելու համար ակտիվի օգտագործման արժեքը կամ իրական արժեքը՝ հանած վաճառքի ծախսերը: Հիմնական միջոցների օտարումից շահույթը կամ վնասը որոշվում է որպես դրանց իրացումից ստացված հասույթի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում այլ ծախսերի կազմում:

Մաշվածություն. Հողի համար մաշվածություն չի հաշվարկվում: Հիմնական միջոցների այլ միավորների մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդի կիրառմամբ՝ բաշխելով դրանց սկզբնական արժեքը մինչև մնացորդային արժեքը՝ օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

	<u>Օգտակար ծառայության ժամկետ՝</u> <u>արտահայտված տարիներով</u>
Գրասենյակային սարքավորումներ	1-8
Փոխադրամիջոցներ	8
Այլ հիմնական միջոցներ	5-10

Ակտիվի մնացորդային արժեքն այն գնահատված գումարն է, որը Ընկերությունը ներկա պահին կստանար ակտիվի օտարումից՝ հանած օտարման գնահատված ծախսումները, եթե ակտիվն արդեն լինել դրա օգտակար ծառայության վերջում ակնկալվող տարիքի և վիճակի: Ակտիվների մնացորդային արժեքները և օգտակար ծառայության ժամկետները վերանայվում և անհրաժեշտության դեպքում ճշգրտվում են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Ներդրումային գույք. Ներդրումային գույքը գույք է, որը պահվում է Ընկերության կողմից՝ վարձակալությունից եկամուտ ստանալու կամ միաժամանակ այդ երկու նպատակներով, և որը զբաղեցված չէ Ընկերության կողմից: Ներդրումային գույքը չափվում է սկզբնական արժեքով, ներառյալ գործարքի գծով ծախսումները, և հետագայում վերագնահատվում է իրական արժեքով, որը վերանայվում է՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջում շուկայական պայմանները արտացոլելու նպատակով: Ներդրումային գույքի իրական արժեքն այն գինն է, որը կստացվեր ակտիվի վաճառքից բնականոն գործարքի արդյունքում՝ առանց գործարքի ծախսումների նվազեցման: Իրական արժեքի լավագույն վկայություն է հանդիսանում համանման վալյուր և վիճակում գտնվող նմանատիպ գույքի ակտիվ շուկայում գործող գները:

Ակտիվ շուկայում ընթացիկ գների բացակայության դեպքում Ընկերությունը դիտարկում է զեղչված դրամական հոսքերի կանխատեսումներից ստացված տեղեկատվությունը՝ առաջնորդվելով ապագա դրամական հոսքերի արժանահավատ գնահատականներով, որոնք հիմնավորված են գործող վարձակալության կամ այլ պայմանագրերի պայմաններով և (ինարավորության դեպքում) արտաքին վկայություններով, ինչպիսիք են շուկայում նույն վայրում և վիճակում գտնվող համանման գույքի համար գործող ընթացիկ վարձակալական վճարները, և օգտագործելով զեղչային դրույքներ, որոնք արտացոլում են դրամական միջոցների հոսքերի գումարային և ժամանակային անորոշության ընթացիկ շուկայական գնահատականները:

Ընկերության ներդրումային գույքի շուկայական արժեքը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ որոշվում է Ընկերության ղեկավարության կողմից կատարված գնահատման հիման վրա:

3 Պատրաստման հիմունքները (շարունակություն)

Ղեկավարությունն ունի գույքի գնահատումը կատարելու համապատասխան մասնագիտական փորձ և հմտություններ:

Վարձակալությունից ստացված եկամուտը գրանցվում է տարվա շահույթում կամ վնասում՝ որպես Վարձակալական եկամուտ: Ներդրումային գույքի իրական արժեքի փոփոխություններից առաջացող օգուտները և վնասները գրանցվում են տարվա շահույթում կամ վնասում և ներկայացվում առանձին:

Հետագա ծախսումները կապիտալացվում են ակտիվի հաշվեկշռային արժեքով միայն այն դեպքում, երբ հավանական է, որ ծախսերի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն, և արժեքը կարող է արժանահավատորեն չափվել: Բոլոր այլ վերանորոգման և պահպանման ծախսերը ծախսագրվում են, երբ դրանք տեղի են ունենում:

Ֆինանսական գործիքներ. հիմնական չափման մոտեցումները: Իրական արժեքը այն գինն է, որը չափման ամսաթվի դրությամբ կստացվեր ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության դիմաց, շուկայի մասնակիցների միջև բնականոն գործարքի արդյունքում: Իրական արժեքի ամենաարժանահավատ վկայություն է հանդիսանում ակտիվ շուկայում գնանշվող գինը: Ակտիվ շուկան այն շուկան է, որում շարունակական հիմունքով տեղի են ունենում ակտիվի կամ պարտավորության հետ կապված գործարքները՝ անհրաժեշտ գնային տեղեկատվություն ապահովելու համար բավարար հաճախականությամբ և ծավալով:

Ակտիվ շուկայում շրջանառվող ֆինանսական գործիքների իրական արժեքը չափվում է որպես առանձին ակտիվի կամ պարտավորության գնանշվող շուկայական գնի և Ընկերության կողմից պահվող գործիքների քանակության արտադրյալ: Նշվածը տեղի է ունենում նույնիսկ այն դեպքում, երբ շուկայի սովորական օրական առջուվաճառքի ծավալը բավարար չէ այդ քանակությունը կլանելու համար, և մեկ գործարքում դիրքը վաճառելու հայտի ներկայացումը կարող է ազդել գնանշվող գնի վրա:

Գնահատման մեթոդները, ինչպիսիք են զեղչված դրամական հոսքերի մոդելները կամ վերջերս կատարված «պարզած ձեռքի հեռավորության գործարքները» կամ ներդրման օբյեկտ հանդիսացող կազմակերպությունների ֆինանսական տվյալների ստացման վրա հիմնված մոդելները, օգտագործվում են որոշելու այն ֆինանսական գործիքների իրական արժեքը, որոնց համար արտաքին շուկայական գնանշման տեղեկատվությունը հասանելի չէ: Իրական արժեքի գնահատումների վերլուծությունը կատարվում է ըստ իրական արժեքի հիերարխիայում մակարդակի, հետևյալ կերպ՝ (i) մակարդակ 1՝ չափումներ ակտիվ շուկայում նույնական ակտիվների կամ պարտավորությունների գնանշվող գներով (չճշգրտվող), (ii) մակարդակ 2՝ չափման գնահատման մեթոդներ, որոնցում ակտիվի կամ պարտավորության համար բոլոր էական ելակետային տվյալներն ուղղակիորեն (գներ) կամ անուղղակիորեն (գների հիման վրա ստացված) դիտելի են, (iii) մակարդակ 3՝ գնահատումներ, որոնք հիմնված չեն բացառապես շուկայի դիտելի տվյալների վրա (այն է՝ գնահատման համար անհրաժեշտ են նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալներ): Իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև փոխանցումները համարվում են տեղի ունեցած հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Գործարքի հետ կապված ծախսումները լրացուցիչ ծախսումներն են, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական գործիքի ձեռքբերմանը, թողարկմանը կամ օտարմանը: Լրացուցիչ ծախսումն այն ծախսումն է, որը կազմակերպությունը չէր կրի, եթե գործարքը տեղի չունենար: Գործարքի հետ կապված ծախսումները ներառում են գործակալներին (ներառյալ՝ որպես վաճառքի գործակալ հանդես եկող աշխատակիցներին), խորհրդատուներին, միջնորդներին, դիլերներին վճարված միջնորդավճարները և կոմիսիոն վճարները, կարգավորող մարմինների և արժեթղթերի փոխանակման գործակալությունների կողմից գանձումները, սեփականության իրավունքի փոխանցման հետ կապված հարկերը և վճարները: Գործարքի հետ կապված ծախսումները չեն ներառում պարտատոմսերի հավելավճարները և զեղչերը, ֆինանսական ծախսերը, ներքին վարչական կամ պահպանման ծախսերը:

Ամորտիզացված արժեքն այն գումարն է, որով ֆինանսական գործիքը գնահատվել է սկզբնական ճանաչման պահին՝ հանած հիմնական գումարի մարումները, գումարած հաշվեգրված տոկոսները և ֆինանսական ակտիվների համար՝ հանած ակնկալվող պարտքային կորուստների գծով ցանկացած նվազեցում: Հաշվեգրված տոկոսները ներառում են սկզբնական ճանաչման ժամանակ գործարքի հետ կապված հետաձգված ծախսումների և հավելավճարի կամ զեղչի ամորտիզացիան՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

3 Պատրաստման հիմունքները (շարունակություն)

Հաշվեգրված տոկոսային եկամուտը և հաշվեգրված տոկոսային ծախսը, ներառյալ հաշվեգրված արժեկտրոնը և ամորտիզացված գեղջը կամ հավելավճարը (ներառյալ՝ առաջացման պահին հետաձգված վճարները, եթե կան այդպիսիք) առանձին չեն ներկայացվում և ներառվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության համապատասխան հոդվածի հաշվեկշռային արժեքում:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը համապատասխան ժամանակահատվածի կտրվածքով տոկոսային եկամտի կամ տոկոսային ծախսի բաշխման այնպիսի մեթոդ է, որը հանգեցնում է հաշվեկշռային արժեքի նկատմամբ կիրառվող հաստատուն պարբերական տոկոսադրույքի (արդյունավետ տոկոսադրույք): Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի գործողության ակնկալվող ժամկետի կամ համապատասխան դեպքերում ավելի կարճ ժամանակահատվածի համար գնահատված դրամական միջոցների ապագա վճարումները կամ ստացվելիք գումարները (չներառելով ապագա պարտքային կորուստները) գեղջում է ճշգրիտ մինչև ֆինանսական գործիքի գույնի հաշվեկշռային արժեքը: Արդյունավետ տոկոսադրույքը գեղջում է փոփոխական տոկոսադրույք ունեցող գործիքների դրամական միջոցների հոսքերը մինչև հաջորդ տոկոսադրույքի վերագնանշման ամսաթիվը, բացառությամբ այն հավելագնի կամ գեղջի, որն արտացոլում է գործիքում սահմանված լողացող տոկոսադրույքի կամ շուկայական դրույքներով չսահմանված այլ փոփոխականների նկատմամբ վարկային սփրեդը: Այդպիսի հավելագները կամ գեղջերն ամորտիզացվում են գործիքի ողջ գործողության ակնկալվող ժամանակահատվածի ընթացքում: Ներկա արժեքի հաշվարկումը ներառում է պայմանագրի կողմերի միջև վճարված կամ ստացված բոլոր վճարները, որոնք արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասն են կազմում: Գնված կամ սկզբնավորված վարկային տեսանկյունից արժեգրված (POCI) ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչման ժամանակ ակտիվների համար արդյունավետ տոկոսադրույքը ճշգրտվում է՝ հաշվի առնելով պարտքային ռիսկը, այսինքն. հաշվարկվում է սկզբնական ճանաչման ժամանակ ակնկալվող դրամական հոսքերի հիման վրա, և ոչ թե պայմանագրային դրամական հոսքերի հիման վրա:

Ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչում. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Բոլոր մյուս ֆինանսական գործիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ ճշգրտված գործարքի հետ կապված ծախսումներով: Սկզբնական ճանաչման ժամանակ իրական արժեքի լավագույն վկայությունն է գործարքի գինը: Սկզբնական ճանաչման ժամանակ շահույթ կամ վնաս ճանաչվում է միայն այն ժամանակ, երբ կա իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերություն, որը կարող է ապացուցվել միևնույն գործիքում դիտելի ընթացիկ շուկայական այլ գործարքներով կամ գնահատման մեթոդով, որի ելակետային տվյալները ներառում են միայն դիտելի շուկայական տվյալները: Սկզբնական ճանաչումից հետո ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքների և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներում ներդրումների գծով ճանաչվում է ակնկալվող պարտքային կորուստ անմիջապես հանգեցնելով հաշվապահական վնասի:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում. Գնահատման կատեգորիաները. Ընկերությունը ֆինանսական ակտիվները դասակարգում է ամորտիզացված արժեքով:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում. Բիզնես մոդել. Բիզնես մոդելն արտացոլում է այն մեթոդը, որի միջոցով Ընկերությունը կառավարում է իր ակտիվները՝ դրամական հոսքերի հավաքագրման նպատակով. արդյո՞ք Ընկերության նպատակն է՝ (i) ակտիվներից հավաքագրել բացառապես պայմանագրային դրամական միջոցների հոսքերը («ակտիվների պահում պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով»), թե (ii) ակտիվներից հավաքագրել և՛ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը, և՛ ակտիվների վաճառքից առաջացող դրամական միջոցների հոսքերը («ակտիվների պահում պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման և վաճառքի նպատակով»), կամ, եթե (i) կամ (ii) պարբերությունները կիրառելի չեն, ֆինանսական ակտիվները դասակարգվում են «այլ» բիզնես մոդելի և չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

Բիզնես մոդելը որոշվում է ակտիվների խմբի համար (պորտֆելի մակարդակով), հիմնվելով այն գործողությունների բոլոր պատշաճ ապացույցների վրա, որոնք Ընկերությունը մտադիր է իրականացնել գնահատման ամսաթվի դրությամբ առկա պորտֆելի համար սահմանված նպատակին հասնելու համար:

3 Պատրաստման հիմունքները (շարունակություն)

Ֆինանսական ակտիվների դասակարգում և հետագա չափում. դրամական միջոցների հոսքերի բնութագրերը. Եթե բիզնես մոդելը նախատեսում է ակտիվների պահում պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի ստացման կամ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի և վաճառքի համար, ապա Ընկերությունը գնահատում է, թե արդյոք պայմանագրային դրամական հոսքերն իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և տոկոսի վճարումներ: Պարունակվող ածանցյալ գործիքներով ֆինանսական ակտիվները դիտարկվում են ամբողջ ծավալով՝ որոշելու, թե արդյոք նրանց դրամական միջոցների հոսքերը համապատասխանում են միայն մայր գումարի և տոկոսի վճարումների հատկանիշներին: Նման գնահատումն իրականացնելիս՝ Ընկերությունը հաշվի է առնում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը համապատասխանում են բազային վարկային համաձայնագրին, այսինքն՝ տոկոսները ներառում են միայն պարտքային ռիսկը, փողի ժամանակային արժեքը, այլ բազային պարտքային ռիսկերը և շահույթի մարժան:

Այն դեպքերում, երբ պայմանագրային պայմաններն առաջացնում են ռիսկի ենթարկվածություն կամ անկայունություն, որն անհամատեղելի է վարկավորման բազային մեխանիզմի հետ, ֆինանսական ակտիվը դասակարգվում և չափվում է իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Միայն մայր գումարի և տոկոսի վճարումների գնահատումը կատարվում է ակտիվի սկզբնական ճանաչման ժամանակ և հետագայում այն չի վերանայվում:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում. ակնկալվող պարտքային կորուստների գնահատված պահուստ. Ընկերությունը կանխատեսումային հիմունքով գնահատում է ամորտիզացված արժեքով չափվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքների, ինչպես նաև վարկային պարտավորությունների և ֆինանսական երաշխիքների պայմանագրերի գծով հնարավոր ակնկալվող պարտքային կորուստները: Ընկերությունը գնահատում է պարտքային գործիքների հետ կապված ակնկալվող պարտքային կորուստը և ճանաչում է կորստի պահուստը հաշվետու յուրաքանչյուր ամսաթվի դրությամբ: Ակնկալվող պարտքային կորուստների գնահատումը արտացոլում է. i) անաչառ և հավանականությամբ կշռված գումարը, որը որոշվում է հնարավոր արդյունքների տիրույթի գնահատման միջոցով. (ii) փողի ժամանակային արժեքը, և (iii) տեղի ունեցած իրադարձությունների, ընթացիկ պայմանների և կանխատեսվող ապագա տնտեսական պայմանների վերաբերյալ ողջ հիմնավոր և հավաստի տեղեկությունները, որոնք հաշվետու ամսաթվի դրությամբ հասանելի են առանց անհարկի միջոցների և ռեսուրսների ծախսման:

Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքները, առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, և տրված փոխառությունները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում են՝ նվազեցված ակնկալվող պարտքային կորուստի:

Ընկերությունը ճանաչում է ակնկալվող պարտքային կորուստների պահուստ հետևյալ ֆինանսական գործիքների վերաբերյալ, որոնք չեն չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով:

- Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր,
- Տրամադրված վարկեր

Ակնկալվող պարտքային կորուստները կորստի պահուստի միջոցով պետք է չափվեն հետևյալ մեծություններով.

- 12-ամսյա ակնկալվող պարտքային կորուստներ, այսինքն՝ ակտիվի ժամկետի ընթացքում ակնկալվող պարտքային կորուստներ, որոնք կարող են առաջանալ հաշվետու ամսաթվից հետո 12 ամսվա ընթացքում ֆինանսական գործիքի պարտազանցման իրադարձությունների արդյունքում, (ներկայացվում է որպես Փուլ 1), կամ
- Ակնկալվող պարտքային կորուստներ ակտիվի ողջ ժամկետի ընթացքում, որոնք կարող են առաջանալ ֆինանսական գործիքի ողջ տևողության ընթացքում բոլոր պարտազանցման իրադարձությունների արդյունքում (ներկայացվում է որպես Փուլ 2 և Փուլ 3):

Ակնկալվող պարտքային կորուստների չափման համար Ընկերությունը կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոտեցում, որն օգտագործում է ակտիվի տևողության ողջ ընթացքում ակնկալվող պարտքային կորուստի պահուստ բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի համար (Ծանոթագրություն 9):

3 Պատրաստման հիմունքները (շարունակություն)

Ամորտիզացված արժեքով չափվող պարտքային գործիքները, առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, տրված փոխառությունները և պայմանագրային ակտիվները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվում են՝ նվազեցված ակնկալվող պարտքային կորուստի:

Ֆինանսական ակտիվների դուրսգրում. Ֆինանսական ակտիվները ամբողջությամբ կամ մասամբ դուրս են գրվում այն ժամանակ, երբ Ընկերությունը սպառել է դրանց վերականգնման բոլոր գործնական հնարավորությունները և եզրակացրել է, որ չկան այդպիսի ակտիվների վերականգնման հիմնավորված ակնկալիքներ: Դուրսգրումն իրենից ներկայացնում է ակտիվի ապաճանաչում: Ակտիվների վերականգնման հիմնավորված ակնկալիքների բացակայության հիմնական ցուցանիշը, վաղեմության ժամկետի ավարտն է: Ընկերությունը կարող է դուրս գրել դեռևս հարկադիր բռնագանձման գործընթացում գտնվող ֆինանսական ակտիվները, այն դեպքում, երբ Ընկերությունը փորձում է բռնագանձել պայմանագրային պարտավորության գումարները՝ առանց վերականգնման ողջամիտ ակնկալիքի:

Ֆինանսական ակտիվների ապաճանաչում. Ընկերությունը ապաճանաչում է ֆինանսական ակտիվը, երբ. (ա) ակտիվը մարվել է կամ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցրել են իրենց ուժը կամ (բ) Ընկերությունը փոխանցել է ֆինանսական ակտիվից դրամական հոսքերի նկատմամբ իրավունքները կամ կնքել է ակտիվների փոխանցման պայմանագիր, միաժամանակ (i) փոխանցելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները կամ (ii) չփոխանցելով և նաև չպահպանելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները, սակայն չպահպանելով նաև ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Վերահսկողությունը պահպանվում է, եթե գործընկերը չունի չկապակցված երրորդ կողմին ակտիվը ամբողջությամբ վաճառելու հնարավորություն՝ առանց վաճառքի սահմանափակումներ կիրառելու:

Ֆինանսական ակտիվների փոփոխություն. Ֆինանսական ակտիվի փոփոխությունը տեղի է ունենում այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվի դրամական միջոցների հոսքերը կարգավորող պայմանագրային պայմանները վերանայվում են կամ այլ կերպ փոփոխվում ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման և մարման ժամկետի միջև ընկած ժամանակահատվածում: Փոփոխությունն ազդում է պայմանագրային դրամական միջոցների հոսքերի գումարի և/կամ ժամանակի վրա՝ անմիջապես կամ ապագա ամսաթվով:

Ներդրումներ բաժնային արժեթղթերում - սկզբնական ճանաչում. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող բաժնային արժեթղթերում ներդրումները սկզբնապես գրանցվում են իրական արժեքով: Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային արժեթղթերում ներդրումները սկզբնապես գրանցվում են իրական արժեքով, ներառյալ գործարքի ծախսերը: Սկզբնական ճանաչման ժամանակ իրական արժեքի լավագույն վկայությունն է գործարքի գինը: Սկզբնական ճանաչման ժամանակ շահույթ կամ վնաս ճանաչվում է միայն այն ժամանակ, երբ կա իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերություն, որը կարող է ապացուցվել միևնույն գործիքում դիտելի ընթացիկ շուկայական այլ գործարքներով կամ գնահատման մեթոդով, որի ելակետային տվյալները ներառում են միայն դիտելի շուկայական տվյալները:

Բաժնային արժեթղթերի այնպիսի գնումները կամ վաճառքները, որոնք պահանջում են ակտիվի մատակարարում տվյալ շուկայում գործող նորմերով կամ գործարար սովորույթներով սահմանված ժամկետի ընթացքում («ստանդարտ պայմաններով») առջ ու վաճառքի գործարքներ) ճանաչվում են գործարքի ամսաթվով, այսինքն այն ամսաթվով, երբ Ընկերությունը պարտավորվում է գնել կամ վաճառել ֆինանսական ակտիվը: Մնացած բոլոր գնման գործարքները ճանաչվում են այն ժամանակ, երբ Ընկերությունը սկսում է այդ ֆինանսական գործիքի մասով հանդես գալ որպես պայմանագրի կողմ:

Ներդրումներ բաժնային արժեթղթերում. Դասակարգում և հետագա չափում - չափման կատեգորիաներ: Խումբը բաժնային արժեթղթերում ներդրումները դասակարգում է որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող, բացառությամբ այն բաժնային արժեթղթերում ներդրումների, որոնք համար խումբը նախնական ճանաչման ժամանակ կատարել է իրական արժեքի հետագա փոփոխությունները այլ համապարփակ եկամուտում ներկայացնելու անբեկանելի ընտրություն (բաժնային արժեթղթեր իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով): Այս անբեկանելի ընտրությունը հասանելի է միայն այնպիսի բաժնային արժեթղթերում ներդրումների համար, որոնք չեն պահվում առևտրային կամ պայմանական հատուցում ստանալու համար, և ձեռքբերողի կողմից ճանաչված են ձեռնարկատիրական գործունեության միավորման մեջ, որի նկատմամբ կիրառվում է ՖՀՄՍ 3-ը:

3 Պատրաստման հիմունքները (շարունակություն)

Ներդրումներ բաժնային արժեթղթերում. վերադասակարգում. Բաժնային արժեթղթերում ներդրումների՝ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով հետագա վերադասակարգում չի իրականացվում, քանի որ հետագա փոփոխությունները այլ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով ներկայացնելու ընտրությունը կրում է անբեկանելի բնույթ:

Ներդրումներ բաժնային արժեթղթերում. ապաճանաչում. Խումբը ապաճանաչում է բաժնային արժեթղթում ներդրումը, երբ. (ա) ակտիվը մարվել է կամ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցրել են իրենց ուժը կամ (բ) Խումբը փոխանցել է բաժնային արժեթղթում ներդրումից դրամական հոսքերի նկատմամբ իրավունքները կամ կնքել է ակտիվների փոխանցման պայմանագիր, միաժամանակ (i) փոխանցելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները կամ (ii) չփոխանցելով և նաև չպահպանելով ակտիվի սեփականության հետ կապված բոլոր էական ռիսկերն ու հատույցները, սակայն չպահպանելով նաև ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Վերահսկողությունը համարվում է պահպանված, եթե մյուս կողմը գործնականում չի կարող ակտիվն ամբողջությամբ վաճառել չփոխկապակցված երրորդ կողմի՝ առանց վաճառքի վրա լրացուցիչ սահմանափակումներ դնելու անհրաժեշտության:

Ֆինանսական պարտավորություններ. չափման կատեգորիաներ. Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես հետագայում ամորտիզացված արժեքով չափվող:

Ֆինանսական պարտավորություններ. ապաճանաչում. Ֆինանսական պարտավորություններն ապաճանաչվում են դրանց մարման պարագայում (այսինքն, երբ պարտավորությունը կատարվում է, կամ պայմանագրով նշված պարտավորությունը դադարում է կամ սպառվում է դրա իրականացման ժամկետը):

Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված ու վճարման ենթակա հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Ֆինանսական գործիքների հաշվանցում. Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են և զուտ գումարը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում միայն այն դեպքում, երբ առկա է ճանաչված գումարները հաշվանցելու համար իրավաբանորեն ամրագրված իրավունք և կա մտադրություն կամ մարելու զուտ արժեքը, կամ՝ միաժամանակ իրացնելու ակտիվը և մարելու պարտավորությունը: Այդ հաշվանցման իրավունքը (ա) չպետք է կախված լինի ապագա իրադարձությունից և (բ) պետք է իրավաբանական ուժ ունենա բոլոր հետևյալ հանգամանքներում՝ (i) բնականոն գործունեության ընթացքում, (ii) պարտագանցման դեպքում և (iii) անվճարունակության կամ սնանկության դեպքում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ. Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են առձեռն դրամական միջոցները, բանկերում պահվող ցպահանջ ավանդները և այլ կարճաժամկետ բարձր իրացվելիություն ունեցող ներդրումները՝ երեք ամիս կամ դրանից պակաս սկզբնական մարման ժամկետով: Դրամական միջոցները և դրամական միջոցների համարժեքները հաշվառվում են ԱՀ-ում, քանի որ. (i) դրանք պահվում են պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով, և այդ դրամական միջոցների հոսքերն իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և տոկոսագումարի վճարում, և (ii) դրանք չեն որոշված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր Առևտրային դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ հետագա չափումը իրականացվում է ամորտիզացված արժեքով՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդի կիրառմամբ:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, երբ գործընկերը կատարում է պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները: Հետագա չափումն իրականացվում է ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Փոխառություններ. Փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց կատարված գործարքի ծախսումների, և հետագայում հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

3 Պատրաստման հիմունքները (շարունակություն)

Գործառնական վարձակալություն. Եթե վարձակալության մեջ ընկերությունը հանդիսանում է վարձակալ, որի դեպքում վարձակալին չեն փոխանցվում սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները (այսինքն՝ գործառնական վարձակալություն), գործառնական վարձակալությունից ստացված վարձակալական վճարները ճանաչվում են որպես վարձակալության եկամուտ գծային հիմունքներով: Վարձակալության փոփոխությունը վարձատուի կողմից հաշվառվում է որպես նոր վարձակալություն փոփոխության ուժի մեջ մտնելու օրվանից՝ հաշվառելով սկզբնական վարձակալության հետ կապված ցանկացած կանխավճարային կամ հաշվեգրված վարձակալության վճարը որպես նոր վարձակալության գծով կատարված վարձակալական վճարների մաս:

Վարձակալական դեպոզիտներ. Վարձակալական դեպոզիտները, որոնք համապատասխանում են ֆինանսական պարտավորության սահմանմանը, սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ այնուհետև՝ չափվում են ամորտիզացված արժեքով: Սկզբնական իրական արժեքի և անվանական արժեքի միջև տարբերությունները ներառվում են որպես գործառնական վարձակալության եկամուտների բաղադրիչ և ճանաչվում են գծային մեթոդով վարձակալության ժամկետի ընթացքում: Այլ վարձակալական դեպոզիտները ներկայացվում են անվանական արժեքով:

Շահութահարկ. Ֆինանսական հաշվետվություններում շահութահարկը ներկայացվում համաձայն օրենսդրության, որն, ըստ էության, գործում է կամ ուժի մեջ է մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Շահութահարկի գծով ծախսը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից և ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ այն ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ անմիջապես սեփական կապիտալում, քանի որ վերաբերում է այնպիսի գործարքների, որոնք տվյալ կամ այլ ժամանակաշրջանում ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ անմիջապես սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկն այն գումարն է, որը ենթակա է վճարման կամ փոխհատուցման և վերաբերում է ընթացիկ կամ նախորդ ժամանակաշրջանների հարկվող շահույթներին կամ վնասներին: Հարկվող շահույթը կամ վնասը հիմնված է գնահատումների վրա, եթե ֆինանսական հաշվետվությունները հաստատված են մինչև համապատասխան հարկային հաշվետվությունների ներկայացումը: Շահութահարկից տարբերվող այլ հարկերը, ճանաչվում են գործառնական ծախսերում:

Հետաձգված հարկերը հաշվարկվում են՝ կիրառելով հաշվեկշռային պարտավորության մեթոդը հետագա տարիներին փոխանցվող հարկային վնասի և ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առկա են ֆինանսական հաշվետվությունների նպատակով օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները և հարկային նպատակով օգտագործվող արժեքները համեմատելիս: Համաձայն սկզբնական ճանաչման վերաբերյալ բացառության, հետաձգված հարկը չի գրանցվում այն ժամանակավոր տարբերությունների դեպքում, երբ ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումը կատարվում է այնպիսի գործարքում, որը չի հանդիսանում ձեռնարկատիրական գործունեության միավորում և որը սկզբնապես գրանցվելիս, ազդեցություն չունի ո՛չ հաշվապահական, և ո՛չ էլ հարկվող շահույթի վրա: Հետաձգված հարկային մնացորդները չափվում են կիրառելով հարկային դրույթները, որոնք, ըստ էության, գործում են կամ ուժի մեջ են մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ և որոնք ակնկալվում է կիրառել այն ժամանակահատվածներում, երբ ժամանակավոր տարբերությունները հակադարձվեն կամ նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասն օգտագործվի:

Նվազեցվող ժամանակավոր տարբերությունների և նախորդ ժամանակաշրջաններից բերված հարկային վնասի մասով հետաձգված հարկային ակտիվը գրանցվում է միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցումները:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա իրավաբանորեն ամրագրված իրավունք հաշվանցել ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց և, երբ հետաձգված շահութահարկի ակտիվներն ու պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկվող անձից կամ տարբեր հարկատուներից, որտեղ կա մնացորդները զուտ հիմունքով կարգավորելու մտադրություն:

Ընկերությունը վերահսկում է այն ժամանակավոր տարբերությունների հակադարձումը, որոնք վերաբերում են դուստր կազմակերպությունների շահաբաժինների գծով հարկերին կամ դրանց վաճառքից շահույթին: Ընկերությունը չի արտացոլում հետաձգված հարկային պարտավորությունները նման ժամանակավոր տարբերությունների գծով, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունն ակնկալում է ժամանակավոր տարբերությունների հակադարձում տեսանելի ապագայում:

3 Պատրաստման հիմունքները (շարունակություն)

Ավելացված արժեքի հարկ. Վաճառքին վերաբերող ավելացված արժեքի հարկը հաշվեգրվում է հաճախորդներին ապրանքների առաքման կամ ծառայությունների մատուցման ամսում, և ենթակա է վճարման հարկային մարմիններին մինչև հաջորդ ամսվա 20-ը: Գնմանը վերաբերող ԱԱՀ-ը սովորաբար հաշվանցվում է վաճառքին վերաբերող ԱԱՀ-ի դիմաց, ԱԱՀ-ի հարկային հաշիվը ստանալուց և հաստատելուց հետո: Հարկային մարմինները թույլատրում են ԱԱՀ-ը հաշվարկել զուտ հիմունքով: Վաճառքին և գնումներին վերաբերող ԱԱՀ-ի գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են զուտ հիմունքով: Ակնկալվող պարտքային կորուստների արժեգրկման համար պահուստ ստեղծելու դեպքում արժեգրկումից կորուստը ճանաչվում է պարտավորության համախառն գումարի չափով, ներառյալ ԱԱՀ-ը:

Պաշարներ. Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը որոշվում է «առաջինը մուտք, առաջինը ելք» սկզբունքով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

Կանխավճարներ. Կանխավճարները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեգրկման գծով պահուստը: Կանխավճարները դասակարգվում են որպես ոչ ընթացիկ, երբ կանխավճարին վերաբերող ապրանքներն ու ծառայությունները ակնկալվում է ստանալ մեկ տարի հետո կամ երբ կանխավճարը վերաբերում է այնպիսի ակտիվի, որը սկզբնական ճանաչման ժամանակ կդասակարգվի որպես ոչ ընթացիկ: Ակտիվներ ձեռք բերելու գծով կանխավճարները փոխանցվում են ակտիվի հաշվեկշռային արժեքին, երբ Ընկերությունը ստանում է ակտիվի նկատմամբ վերահսկողություն և հավանական է, որ ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն: Այլ կանխավճարները ծախսագրվում են շահույթի կամ վնասի կազմում, երբ կանխավճարի հետ կապված ծառայությունը ստացվում է: Եթե կա այնպիսի հայտանիշ, որ կանխավճարին վերաբերող ակտիվները, ապրանքները կամ ծառայությունները չեն ստացվի, ապա կանխավճարի հաշվեկշռային արժեքը համապատասխանաբար դուրս է գրվում և արժեգրկումից կորուստը ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում:

Կանոնադրական կապիտալ. Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Լրացուցիչ ծախսերը, որոնք անմիջականորեն վերագրելի են նոր բաժնետոմսերի թողարկմանը, սեփական կապիտալում ցույց են տրվում որպես ստացված մուտքերից նվազեցում՝ հարկումից հետո: Իրական արժեքի այն մասը, որը գերազանցում է թողարկված բաժնետոմսերի անվանական արժեքը, սեփական կապիտալում գրանցվում է որպես էմիսիոն եկամուտ:

Շահաբաժիններ. Շահաբաժինները ներկայացվում են որպես պարտավորություն և նվազեցվում են սեփական կապիտալից այն ժամանակաշրջանում, երբ դրանք հայտարարվել և հաստատվել են: Շահաբաժինները, որոնք հայտարարված են հաշվետու ժամանակաշրջանից հետո և մինչև ֆինանսական հաշվետվությունների թողարկման համար հատատումը, բացահայտվում են հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքերի վերաբերյալ ծանոթագրությունում: Ընկերության՝ ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն պարտաստված հաշվետվությունները հիմք են հանդիսանում շահույթի բաշխման և այլ հատկացումների համար:

Պարտավորությունների և վճարների գծով պահուստներ. Պարտավորությունների և վճարների գծով պահուստները անորոշ ժամկետներով կամ չափով ոչ ֆինանսական պարտավորություններ են: Դրանք հաշվեգրվում են, երբ Ընկերությունն, անցյալ դեպքերի արդյունքում ունի իրավաբանորեն ամրագրված կամ ենթադրվող պարտավորություն և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող ռեսուրսների արտահոսք, ինչպես նաև պարտավորության չափը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Պահուստները գնահատվում են՝ ելնելով ծախսերի ներկա արժեքից, որն, ինչպես ակնկալվում է, կպահանջվի պարտավորության մարման համար՝ գեղչված մինչև հարկումը տոկոսադրույքով, որն արտացոլում է տվյալ պարտավորությունների գծով գումարների և ռիսկերի ներկա արժեքը: Ժամանակի ընթացքում պահուստի աճը ճանաչվում է որպես տոկոսային ծախս ֆինանսական ծախսերի կազմում:

Տուրքերը և վճարները, ինչպիսիք են, օրինակ, շահութահարկից բացի այլ հարկերը կամ կանոնակարգային վճարները, որոնք հիմնված են վճարման պարտավորության առաջացմանը նախորդող ժամանակահատվածի տեղեկատվության վրա, ճանաչվում են որպես պարտավորություն, երբ տեղի է ունենում օրենսդրությամբ սահմանված կարգով տուրքի վճարում առաջացնող պարտավորեցնող դեպք, որն առաջ է բերում տուրք վճարելու պարտավորություն: Եթե տուրքի վճարումը կատարվել է մինչև պարտավորեցնող դեպքը տեղի ունենալը, այն ճանաչվում է որպես կանխավճար:

3 Պատրաստման հիմունքները (շարունակություն)

Փոխհատուցվող ակտիվ. Այն դեպքում, երբ Շնկերությունն ակնկալում է, որ պահուստի մի մասը կամ ամբողջը փոխհատուցվի երրորդ կողմի կողմից, դեբիտորական պարտքը ճանաչվում է որպես ակտիվ, եթե Շնկերությունը հիմնականում համոզված է, որ փոխհատուցումը կստացվի, և դեբիտորական պարտքի գումարը կարող է արժանահավատորեն չափվել: Փոխհատուցվող ակտիվները հաշվառվում են ամորտիզացված արժեքով և առանց ակնկալվող պարտքային կորուստների:

Հասույթի ճանաչում. Շնկերությունը եկամուտ է ստանում գործառնական վարձակալություններում որպես վարձատու հանդես գալու արդյունքում, որի դեպքում չեն փոխանցվում ներդրումային գույքի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները: Ներդրումային գույքի գործառնական վարձակալությունից առաջացող եկամուտը հաշվառվում է գծային սկզբունքով վարձակալության ժամկետի ընթացքում և ներառվում է շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում հասույթի կազմում պայմանավորված իր գործառնական բնույթով, բացառությամբ պայմանական վարձակալության եկամտի, որը ճանաչվում է դրա առաջացման պահին: Գործառնական վարձակալության շուրջ բանակցությունների վարման և կազմակերպման ժամանակ առաջացած սկզբնական ուղղակի ծախսումները ճանաչվում են որպես ծախս վարձակալության ժամկետի ընթացքում նույն հիմունքով, ինչ վարձակալական եկամուտը:

Վարձակալական խրախուսումները, որոնք վճարվում են կամ ենթակա են վճարման վարձակալին, հանվում են վարձակալության վճարներից: Համապատասխանաբար, վարձակալների վարձակալական խրախուսումները ճանաչվում են որպես վարձակալության գծով հասույթի կրճատում գծային հիմունքով, վարձակալության ժամկետի ընթացքում: Վարձակալության ժամկետն իրենից ներկայացնում է վարձակալության անչեղարկելի ժամկետը, ինչպես նաև ցանկացած հետագա ժամկետ, որի ընթացքում վարձակալն ունի վարձակալության շարունակման հնարավորություն, երբ վարձակալության սկզբում Շնկերությունը ողջամտորեն վստահ է, որ վարձակալը կգործադրի այդ տարբերակը:

Հետաձգված հասույթ. Հետաձգված հասույթը ճանաչվում է որպես պարտավորություն, երբ Շնկերությունը ստանում է կանխավճարը:

Հատուցումներ աշխատակիցներին. Օրավարձերը, աշխատավարձերը, ՀՀ պետական կենսաթոշակային և սոցիալական ապահովագրության հիմնադրամներին հատկացումները վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության արձակուրդները, պարգևավճարները և ոչ դրամական նպաստները (օրինակ, առողջապահական ծառայությունները) հաշվեգրվում են այն տարվա ընթացքում, երբ համապատասխան ծառայությունները մատուցվում են Շնկերության աշխատողների կողմից: Կենսաթոշակային հատկացումներից բացի, Շնկերությունը չունի կենսաթոշակային կամ համանման այլ վճարումներ կատարելու իրավական կամ կառուցողական պարտավորություն:

Թողարկումից հետո ֆինանսական հաշվետվությունների փոփոխություն. Թողարկումից հետո ֆինանսական հաշվետվությունների ցանկացած փոփոխություն պահանջում է Շնկերության ղեկավարության հաստատումը, ով լիազորել է այդ ֆինանսական հաշվետվությունների թողարկումը:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական գնահատականներ և դատողություններ

Շնկերությունը կատարում է հաշվապահական հաշվառման գնահատականներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների և հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա: Գնահատականներն ու դատողությունները շարունակական կերպով վերանայվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ինչպիսիք են հետագա իրադարձությունների ակնկալիքները, որոնք առկա պայմաններում տրամաբանական են համարվում: Գնահատականներից բացի, ղեկավարությունը կատարում է նաև որոշակի այլ դատողություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գործընթացում: Մասնագիտական դատողությունները, որոնք առավել նշանակալի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված արժեքների վրա, և գնահատականները, որոնք կարող են հիմք հանդիսանալ հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներում նշանակալի ճշգրտման համար, հետևյալն են.

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության Էական գնահատականներ և դատողություններ (շարունակություն)

Հետաձգված հարկային ակտիվի ճանաչում. Ճանաչված հետաձգված հարկային ակտիվները ներկայացնում են շահութահարկի այն գումարը, որը կարող է հաշվանցվել ապագա հարկվող շահույթից նվազեցումների դիմաց և ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա համապատասխան հարկային արտոնության իրացման բարձր հավանականություն: Սա ենթադրում է ժամանակավոր տարբերությունների առկայություն, որոնք ապագայում ակնկալվում է վերականգնել, և բավարար ապագա հարկվող շահույթ, որոնց դիմաց ակնկալվում է օգտագործել նվազեցումները: Ապագա հարկվող շահույթի և ապագայում ամենայն հավանականությամբ հաշվանցման ենթակա հարկային նվազեցումների չափը որոշվում է ղեկավարության կողմից մշակված միջնաժամկետ գործարար ծրագրի և ապագայի նկատմամբ դրա արտարկման/էքստրապոլացիայի/ արդյունքների հիման վրա: Գործարար ծրագիրը հիմնված է ղեկավարության՝ տվյալ հանգամանքներում հիմնավորված ակնկալիքների վրա:

Հարկային օրենսդրություն. ՀՀ հարկային և մաքսային օրենսդրությունը ենթակա են տարբեր մեկնաբանումների: Տես Ծանոթագրություն 22:

Կապակցված կողմերի հետ գործարքների սկզբնական ճանաչում. Բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը գործարքներ է իրականացնում իր կապակցված կողմերի հետ: ՖՀՄՍ 9-ը պահանջում է ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչում՝ հիմնված նրանց իրական արժեքի վրա: Դատողությունը կիրառվում է որոշելու, թե արդյոք գործարքները գնահատված են շուկայական կամ ոչ շուկայական տոկոսադրույքներով, երբ չկա ակտիվ շուկա այդպիսի գործարքների համար: Դատողության համար հիմք է հանդիսանում նմանատիպ գործարքների գնահատումը չկապակցված կողմերի հետ և արդյունավետ տոկոսադրույքով վերլուծությունները: Կապակցված կողմերի հաշվեկշռի պայմաններն ու դրույթները բացահայտվում են Ծանոթագրություն 27-ում:

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատում. Ակնկալվող պարտքային կորուստների գնահատումը կարևոր գնահատական է, որը ներառում է մեթոդաբանության, մոդելների և ելակետային տվյալների սահմանումը: Հետևյալ բաղադրիչներն ունեն Էական ազդեցություն պարտքային կորուստի պահուստի վրա՝ Պարտազանցման սահմանումը, պարտքային ռիսկերի նշանակալի աճը, Պարտազանցման հավանականությունը (PD), Պարտազանցման ժամանակ գործիքի արժեքը (EAD), Պարտազանցման ժամանակ կորստի չափը (LGD), ինչպես նաև մակրոտնտեսական սցենարների մոդելները: Ընկերությունը պարբերաբար վերանայում և հաստատում է մոդելները և ելակետային տվյալները՝ գնահատված ակնկալվող պարտքային կորուստների և փաստացի պարտքային կորուստների միջև եղած տարբերությունները նվազեցնելու նպատակով:

Ներդրումային գույքի գնահատում. Ներդրումային գույքը ներկայացվում է իր իրական արժեքով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջում ղեկավարության կողմից պատրաստված հաշվետվությունների հիման վրա:

Ներկա տնտեսական միջավայրում Ընկերության հիմնական շուկաներում գույքային գործարքների հաճախականությունը ցածր է: Ղեկավարության գնահատմամբ՝ չկա բավարար շուկայական գործունեություն, որը թույլ կտար ստանալ համանման գույքով բնականոն գործարքների գծով համադրելի գներ Ընկերության ներդրումային գույքի իրական արժեքը որոշելու նպատակով, քանի որ այդ տեղեկատվությունը անմիջականորեն մատչելի չէ: Այս գույքի դեպքում, գնահատման համար հիմնականում հիմք են ծառայել դրամական միջոցների զեղչված հոսքերի կանխատեսումները՝ հիմնված ապագա դրամական հոսքերի հուսալի գնահատականների վրա, և հիմնավորված ցանկացած համանման վարձակալության և այլ պայմանագրերի պայմաններով, և արտաքին վկայություններով, ինչպիսիք են ընթացիկ շուկայական վարձակալության պայմանները համադրելի, համանման տեղադիրքում և վիճակում գտնվող գույքի համար, և օգտագործելով զեղչված դրույքաչափերը, որոնք արտացոլում են դրամական միջոցների հոսքերի գումարների և ժամկետների հետ կապված անորոշությունների ընթացիկ շուկայական գնահատումները:

Ընկերության ներդրումային գույքի վերաբերյալ գնահատման հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը վաճառքի համադրելի գները դիտարկելիս բացառել է արտասովոր պայմաններում կատարվող վաճառքները: Ղեկավարությունը կատարել է ենթադրություններ, որոնք ընկած են գնահատման ժամանակ օգտագործված զեղչված դրամական հոսքերի մոդելների հիմքում և հաստատել, որ այնպիսի գործոններ, ինչպիսին է կիրառված զեղչման դրույքը, որոշվել են պատշաճ կերպով՝ հաշվի առնելով հաշվետու ժամանակաշրջանի վերջին առկա շուկայական պայմանները:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության Էական գնահատականներ և դատողություններ (շարունակություն)

Անկախ վերը նշվածից, ղեկավարությունը գտնում է, որ իր ներդրումային գույքի գնահատումը ներկայումս ենթակա է դատողության բարձր աստիճանի և մեծ է հավանականությունը, որ վաճառքից ստացված փաստացի հասույթը կարող է տարբերվել հաշվեկշռային արժեքից: Իրական արժեքի գնահատման հիմքում ընկած հիմնական ենթադրությունները վերաբերում են. պայմանագրային հիմունքով վարձակալությունների ստացմանը, ապագայում ակնկալվող շուկայական պայմաններով վարձակալություններին. պարապուրդի ժամանակահատվածներին, սպասարկման պահանջներին, և համապատասխան գեղջի դրույքաչափին: Այս գնահատումները պարբերաբար համեմատվում են փաստացի շուկայական եկամտաբերության տվյալների և Շնկերության փաստացի գործարքների հետ, ինչպես նաև շուկայում ներկայացված տվյալների հետ:

Կատարված հիմնական ենթադրությունները և դրանց վերաբերող հնարավոր փոփոխությունների համախառն գնահատումների վրա ազդեցությունը, մնացած բոլոր փոփոխականների անփոփոխ մնալու դեպքում, հետևյալն են.

- Վարձակալության ապագա տոկոսադրույքը մեկ քառակուսի մետրի համար տարեկան գնահատվել է 147,903 ՀՀ դրամ՝ հիմք ընդունելով գրասենյակների վարձակալությունից ստացվող հասույթի նախորդ ժամանակաշրջանների տվյալները: Գործող վարձակալության պայմանագրերի ավարտին կիրառվում են վարձակալության փաստացի դրույքաչափերը, քանի որ դա համապատասխանում է վարձակալության շուկայական դրույքաչափերին: (2023թ.՝ վարձակալության ապագա տոկոսադրույքը մեկ քառակուսի մետրի համար տարեկան գնահատվել է 144,890 ՀՀ դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար, հիմք ընդունելով գրասենյակների վարձակալությունից ստացվող հասույթի նախորդ ժամանակաշրջանների տվյալները: Գործող վարձակալության պայմանագրերի ավարտին կիրառվում են վարձակալության փաստացի դրույքաչափերը, քանի որ դա համապատասխանում է վարձակալության շուկայական դրույքաչափերին): Եթե վարձակալության այս դրույքաչափերը աճեին կամ նվազեին 5 տոկոսով, ապա ներդրումային գույքի ընդհանուր հաշվեկշռային արժեքը կկազմեր համապատասխանաբար 817,023 հազ. ՀՀ դրամ ավելի (2023թ.՝ 1,179,797 հազ. ՀՀ դրամ ավելի) կամ 817,023 հազ. ՀՀ դրամ պակաս (2023թ.՝ 1,179,797 հազ. ՀՀ դրամ պակաս):
- Գործունեության տարբեր տարիներին պարապուրդի արդյունքում կրած վնասի ցուցանիշը ենթադրվել է 0% (2023թ.՝ 0%): Եթե պարապուրդի արդյունքում կրած վնասի ցուցանիշը ավելանար/նվազեր 1 տոկոսային կետով, ապա ներդրումային գույքի հաշվեկշռային արժեքը կկազմեր 182,570 հազ. ՀՀ դրամով ցածր / 182,570 հազ. ՀՀ դրամով ավելի (2023թ.՝ 175,022 հազ. ՀՀ դրամով ցածր/ 175,022 հազ. ՀՀ դրամով ավելի):
- Չեղյման դրույքաչափը ենթադրվել է 13.97% (2023թ.՝ 13.11%): Եթե այս չեղյման դրույքաչափը ավելանար/նվազեր 1 տոկոսային կետով, ապա ներդրումային գույքի հաշվեկշռային արժեքը կկազմեր 1,630,888 հազ. ՀՀ դրամով ցածր / 2,013,419 հազ. ՀՀ դրամով ավելի (2023թ.՝ 1,611,703 հազ. ՀՀ դրամով ցածր/ 2,012,334 հազ. ՀՀ դրամով ավելի):
- Աճի տեմպը ենթադրվել է 4.50% (2023թ.՝ 4.15%): Եթե այս կապիտալացման դրույքաչափը ավելանար/նվազեր 1 տոկոսային կետով, ապա ներդրումային գույքի հաշվեկշռային արժեքը կկազմեր 1,241,667 հազ. ՀՀ դրամով ավելի / 1,004,572 հազ. ՀՀ դրամով պակաս (2023թ.՝ 1,164,472 հազ. ՀՀ դրամով պակաս/ 930,590 հազ. ՀՀ դրամով ավելի):

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը. Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը կատարվում է՝ ելնելով մասնագիտական դատողությունից, հիմք ընդունելով համանման ակտիվների գծով առկա փորձը: Այս ակտիվներում մարմնավորվող ապագա տնտեսական օգուտները հիմնականում կստացվեն դրանց օգտագործումից: Սակայն մի շարք այլ գործոններ, ինչպիսիք են՝ տեխնիկական կամ առևտրային տեսանկյունից մաշվածությունը, հաճախ հանգեցնում են տվյալ ակտիվների հետ կապված տնտեսական շահույթի նվազմանը: Ղեկավարությունը գնահատում է հիմնական միջոցների օգտակար ծառայության մնացորդային ժամկետը՝ հիմք ընդունելով ակտիվների տեխնիկական վիճակը, և հաշվի առնելով հաշվարկային ժամանակահատվածը, որի ընթացքում տվյալ ակտիվները Շնկերության համար կառաջացնեն տնտեսական շահույթ: Հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոնները. ա) ակտիվների ակնկալվող օգտագործման ժամկետը, բ) սարքավորումների ակնկալվող մաշվածությունը, որը կախված է շահագործման բնութագրերից և տեխնիկական սպասարկման ծրագրից, և գ) տեխնիկական կամ առևտրային տեսանկյունից մաշվածությունը, որն առաջանում է շուկայի պայմանների փոփոխության հետևանքով:

4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության Էական գնահատականներ և դատողություններ (շարունակություն)

Եթե գնահատված օգտակար ծառայության ժամկետները 10%-ով տարբերվեին ղեկավարության գնահատականներից, ապա 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար մաշվածության վրա ազդեցությունը կկազմեր 4,381 հազ. ՀՀ դրամի չափով աճ կամ 4,381 հազ. ՀՀ դրամի չափով նվազում (2023թ.՝ 4,476 հազ. ՀՀ դրամի չափով աճ կամ 4,476 հազ. ՀՀ դրամի չափով նվազում):

Հիմնական միջոցների մնացորդային արժեքները. Ղեկավարությունը հիմնական միջոցների մնացորդային արժեքները սահմանել է գոյական:

5 Անցում Նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին

2024թ. հունվարի 1-ից ուժի մեջ են մտել հետևյալ Նոր ստանդարտները և փոփոխությունները.

Փոփոխություններ ՖՀՄՍ 16-ում Կարծակալություն. Կարծակալության պարտավորություն վաճառքի և հետադարձ վարծակալության ժամանակ (թողարկվել է 2022թ. սեպտեմբերի 22-ին և ուժի մեջ է մտնում 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Փոփոխությունները վերաբերում են վաճառքի և հետադարձ վարծակալության գործարքներին, որոնք բավարարում են ՖՀՄՍ 15-ի պահանջները՝ վաճառք հաշվառվելու համար: Փոփոխությունները պահանջում են, որ վաճառող-վարծակալը հետագայում չափի գործարքից բխող պարտավորությունները այն կերպ, որ չճանաչի իր կողմից պահպանված օգտագործման իրավունքի հետ կապված որևէ շահույթ կամ վնաս: Սա նշանակում է նման շահույթի հետաձգում, Նույնիսկ եթե պարտավորության Էությունը կայանում է փոփոխական վճարումներում, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույքաչափից:

Կարծաժամկետ և երկարաժամկետ պարտավորությունների դասակարգումը – ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ (ի սկզբանե թողարկվել է 2020թ. հունվարի 23-ին և հետագայում թողարկման ամսաթիվը փոփոխվել է 2020թ. հուլիսի 15-ին և 2022թ. հոկտեմբերի 31-ին, ուժի մեջ է մտնում 2024թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Այս փոփոխություններով հստակեցվում է, որ պարտավորությունների՝ որպես կարծաժամկետ կամ երկարաժամկետ դասակարգումը պայմանավորված է հաշվետու ժամանակաշրջանի վերջում գոյություն ունեցող իրավունքներով: Պարտավորությունները երկարաժամկետ են, եթե կազմակերպությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ըստ Էության ունի դրանց մարումն առնվազն 12 ամսով հետաձգելու իրավունք: Ուղեցույցն այլևս չի սահմանում այդ իրավունքի անվերապահ լինելու պահանջ: 2022թ. հոկտեմբերի փոփոխությունը սահմանեց, որ վարկային պայմանագրերը, որոնք պետք է կատարվեն հաշվետու ամսաթվից հետո, չեն ազդում հաշվետու ամսաթվի դրությամբ պարտքի՝ որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ դասակարգման վրա: Մարումը ապագայում հետաձգելու իրավունքի իրացման առումով ղեկավարության ակնկալիքները ազդեցություն չունեն պարտավորությունների դասակարգման վրա: Պարտավորությունը դասակարգվում է որպես կարծաժամկետ, եթե պայմանը խախտվել է հաշվետու ամսաթվի դրությամբ կամ դրանից առաջ, Նույնիսկ եթե հաշվետու ժամանակաշրջանի վերջում պարտատիրոջից ստացվել է պայմանի կատարման պարտավորությունից ազատում: Միևնույն ժամանակ, վարկը դասակարգվում է որպես երկարաժամկետ, եթե վարկային պայմանագրի պայմանը խախտվում է միայն հաշվետու ամսաթվից հետո: Բացի այդ, փոփոխությունները հստակեցնում են պարտքի դասակարգման պահանջները, որոնք կազմակերպությունը կարող է մարել՝ այն սեփական կապիտալի վերածելու միջոցով: «Մարում» հասկացությունը սահմանվում է որպես պարտավորության դադարեցում՝ դրամական միջոցների, տնտեսական օգուտները մարմնավորող այլ ռեսուրսների կամ կազմակերպության սեփական բաժնային գործիքների միջոցով կատարված վերջնահաշվարկի արդյունքում: Բացառություն է սահմանվում փոխարկելի գործիքների համար, որոնք կարող են վերածվել սեփական կապիտալի, բայց միայն այն գործիքների համար, երբ փոխարկման օպցիոնը դասակարգվում է որպես բարդ ֆինանսական գործիքի առանձին բաղադրիչ հանդիսացող բաժնային գործիք:

5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին (շարունակություն)

Փոփոխություններ ՀՀՄՍ 7-ում «Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն» և ՀՀՄՍ 7-ում «Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ. մատակարարների ֆինանսական պայմանագրեր» (թողարկվել է 2023թ. մայիսի 25-ին): Ի պատասխան ֆինանսավորման պայմանագրերի ոչ համարժեք կամ ապակողմնորոշիչ բացահայտման վերաբերյալ ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների մտահոգություններին, 2023թ. մայիսին ՀՀՄՍԽ-ն փոփոխություններ է կատարել ՀՀՄՍ 7-ում և ՀՀՄՍ 7-ում պահանջելով բացահայտել կազմակերպության մատակարարների ֆինանսական պայմանագրերը (ՄՖՊ): Այս փոփոխություններով պահանջվում է, որպեսզի կազմակերպությունը բացահայտի մատակարարների այն ֆինանսական պայմանագրերը, որոնք ֆինանսական հաշվետվություններ օգտագործողներին հնարավորություն կտան գնահատել այդ պայմանագրերի ազդեցությունը կազմակերպության պարտավորությունների և դրամական միջոցների հոսքերի վրա և կազմակերպության իրացվելիության ռիսկի վրա: Լրացուցիչ բացահայտման պահանջների նպատակն է բարձրացնել մատակարարների ֆինանսական պայմանագրերի թափանցիկությունը: Փոփոխությունները չեն ազդում ճանաչման կամ չափման սկզբունքների վրա, այլ միայն բացահայտման պահանջների վրա:

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Հրապարակվել են 2025թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո տարեկան ժամանակահատվածների համար պարտադիր մի շարք նոր ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնց վաղ կիրառում չի իրականացվել Ընկերության կողմից:

Փոփոխություններ ՀՀՄՍ 21-ում «Փոխանակելիության բացակայություն» (թողարկվել է 2023թ. օգոստոսի 15-ին և ուժի մեջ է մտնում 2025թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): 2023թ. օգոստոսին ՀՀՄՍԽ-ն փոփոխություններ է կատարել ՀՀՄՍ 21-ում, որը նպատակ ունի օգնել կազմակերպություններին գնահատելու երկու արժույթների միջև փոխանակելիությունը և որոշել սփոթ փոխարժեքն այն դեպքում, երբ փոխանակելիությունն առկա չէ: Փոփոխությունները ազդում են կազմակերպության վրա այն ժամանակ, երբ ընկերությունն ունի գործարք կամ գործառնություն արտարժույթով, որը չափման ամսաթվին որոշակի նպատակով չի կարող փոխանակվել այլ արժույթի: ՀՀՄՍ 21-ի փոփոխությունները չեն ներկայացնում սփոթ փոխարժեքը գնահատելու վերաբերյալ մանրամասն պահանջներ: Փոխարենը, սահմանվում է շրջանակ, որի համաձայն կազմակերպությունը կարող է որոշել սփոթ փոխարժեքը գնահատման ամսաթվի դրությամբ: Նոր պահանջները կիրառելիս չի թույլատրվում համեմատական տեղեկատվության վերաներկայացում: Անհրաժեշտ է ազդեցության ենթարկվող գումարները փոխարկել սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ գնահատված սփոթ փոխարժեքներով՝ չբաշխված շահույթի կամ կուտակային փոխարժեքային տարբերությունների պահուստի ճշգրտմամբ:

Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ . ՀՀՄՍ 9-ի և ՀՀՄՍ 7-ի փոփոխություններ (հրապարակվել է 2024թ. մայիսի 30-ին և ուժի մեջ է մտնում 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): 2024թ. մայիսի 30-ին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՀՀՄՍ 9-ի և ՀՀՄՍ 7-ի փոփոխություններ՝ հետևյալ նպատակներով.

- (ա) պարզաբանել որոշ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ճանաչման և ապաճանաչման ամսաթիվը, սահմանելով նոր բացառություն էլեկտրոնային դրամական փոխանցումների համակարգի միջոցով մարվող որոշ ֆինանսական պարտավորությունների համար.
- (բ) պարզաբանել և լրացուցիչ ուղեցույց ներկայացնել՝ բացառապես մայր գումարի և տոկոսների վճարման չափանիշին ֆինանսական ակտիվի համապատասխանությունը գնահատելու համար.
- (գ) ավելացնել նոր բացահայտումներ պայմանագրային ժամկետներ ունեցող որոշակի գործիքների գծով, որոնք կարող են առաջացնել դրամական միջոցների հոսքերի փոփոխություն (օրինակ՝ բնապահպանական, սոցիալական և կառավարման (ԲՄԿ) նպատակների իրագործմանը կապակցված որոշ գործիքներ). և
- (դ) թարմացնել իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով (FVOCI) չափվող բաժնային գործիքների բացահայտումները:

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

ՖՅՄՍ 18 «Ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում» (թողարկվել է 2024թ. ապրիլի 9-ին և ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): 2024թ. ապրիլին ՅՄՍՄ-ն հրապարակել է նոր ստանդարտ՝ ՖՅՄՍ 18 «Ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում», որը առանձնահատուկ անդրադառնում է շահույթի կամ վնասի մասին հաշվետվություններին առնչվող թարմացումներին: ՖՅՄՍ 18-ում ներկայացված առանցքային նոր հասկացությունները առնչվում են հետևյալին՝

- շահույթի կամ վնասի հաշվետվության կառուցվածքը.
- ֆինանսական հաշվետվություններում պահանջվող բացահայտումները շահույթի կամ վնասի չափման որոշակի դիրքերի գծով, որոնք ներկայացվում են կազմակերպության ֆինանսական հաշվետվություններից դուրս (այսինքն՝ ղեկավարության կողմից սահմանված չափման դիրքերը). և
- համախմբման և տարանջատման ընդլայնված սկզբունքները, որոնք կիրառելի են հիմնական ֆինանսական հաշվետվությունների, և ընդհանուր առմամբ ծանոթագրությունների նկատմամբ:

ՖՅՄՍ 18-ը կփոխարինի ՅՄՍՄ 1-ին. ՅՄՍՄ 1-ում ներառված սկզբունքներից շատերը պահպանվում են՝ սահմանափակ փոփոխություններով: ՖՅՄՍ 18-ը չի ազդի ֆինանսական հաշվետվությունների հողվածների ճանաչման կամ չափման վրա, սակայն կարող են փոփոխվել կազմակերպության կողմից որպես «գործառնական շահույթ կամ վնաս» ներկայացվող դիրքերը: ՖՅՄՍ 18-ը կկիրառվի 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Այն կիրառելի է նաև համեմատական տեղեկատվության նկատմամբ:

ՖՅՄՍ 19. Հրապարակային հաշվետվողականության պահանջ չունեցող դուստր ձեռնարկություններ. Բացահայտումներ (թողարկվել է 2024 թվականի մայիսի 9-ին և ուժի մեջ է 2027 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը (ՅՄՍՄ) թողարկել է նոր ՖՅՄՍ հաշվառման ստանդարտ դուստր ձեռնարկությունների համար: ՖՅՄՍ 19-ը իրավասու դուստր ձեռնարկություններին հնարավորություն է տալիս ՖՅՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտները կիրառել կրճատված բացահայտումներով: ՖՅՄՍ 19-ի կիրառումը թույլ կտա նվազեցնել դուստր ձեռնարկությունների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ծախսերը՝ միաժամանակ ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար պահպանելով տեղեկատվության օգտակարությունը: Իրենց առանձնացված ֆինանսական հաշվետվությունների համար ՖՅՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներ օգտագործող դուստր կազմակերպությունները ներկայացնում են բացահայտումներ, որոնք կարող են անհամաչափ լինել օգտագործողների տեղեկատվական կարիքներին: ՖՅՄՍ 19-ը նպատակ ունի հասցեագրել այս մարտահրավերները՝

- հնարավորություն տալով դուստր ձեռնարկություններին վարել հաշվապահական հաշվառման միայն մեկ լրակազմ, որը բավարար է ինչպես մայր ընկերության, այնպես էլ իրենց սեփական ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների կարիքների տեսանկյունից.
- Բացահայտման պահանջների կրճատում. ՖՅՄՍ 19-ը հնարավորություն է տալիս ներկայացնել կրճատված բացահայտումներ, որոնք ավելի պատշաճ կերպով են համապատասխանում ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների կարիքներին:

ՖՅՄՍ 14 «Կարգավորող հետաձգված հաշիվներ» (թողարկվել է 2014թ. հունվարի 30-ին): ՖՅՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտները առաջին անգամ կիրառող կազմակերպություններին ՖՅՄՍ 14-ը հնարավորություն է ընձեռում շարունակել դրույքաչափերի կարգավորման հետ կապված գումարների ճանաչումը իրենց նախորդ հաշվապահական հաշվառման ստանդարտի պահանջների համաձայն: Այնուամենայնիվ, ՖՅՄՍ Հաշվապահական հաշվառման ստանդարտներն արդեն կիրառող և այդ գումարները չճանաչող կազմակերպությունների հետ համադրելիությունը մեծացնելու նպատակով, ստանդարտը պահանջում է դրույքաչափերի կարգավորման ազդեցությունը ներկայացնել այլ հողվածներից առանձին: Այն կազմակերպությունը, որն իր ֆինանսական հաշվետվությունները արդեն ներկայացնում է ՖՅՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն, իրավասու է կիրառել ստանդարտը: Այս ստանդարտի ուժի մեջ մտնելու ամսաթիվը դեռ պետք է որոշվի ՅՄՍՄ-ի կողմից:

6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)

«Ակտիվների վաճառք կամ հատկացում՝ ներդրողի և ասոցիացված կազմակերպությունների կամ համատեղ ձեռնարկումների միջև» - փոփոխություններ ՖՀՄՍ 10-ում և ՀՀՄՍ 28-ում (թողարկված են 2014թ. սեպտեմբերի 11-ին, և ուժի մեջ են մտնում ՀՀՄՍԽ-ի կողմից որոշվելիք ամսաթվին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար): Այս փոփոխությունները վերաբերում են ներդրողի և իր ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկումների միջև ակտիվների վաճառքին կամ հատկացմանը վերաբերող՝ ՖՀՄՍ 10-ի և ՀՀՄՍ 28-ի պահանջների միջև գոյություն ունեցող անհամապատասխանությանը: Փոփոխությունների կիրառման հիմնական հետևանքն այն է, որ շահույթը կամ վնասը ճանաչվում է ամբողջությամբ այն դեպքում, երբ գործարքը առնչվում է ձեռնարկատիրական գործունեությանը: Շահույթը կամ վնասը ճանաչվում է մասնակիորեն այն դեպքում, երբ ակտիվը չի առնչվում ձեռնարկատիրական գործունեությանը, նույնիսկ եթե այդ ակտիվները պատկանում են դուստր կազմակերպությանը: 2015թ. ՀՀՄՍԽ-ն որոշել է անորոշ ժամանակով հետաձգել այս փոփոխությունների ուժի մեջ մտնելու ժամկետը:

ՀՀՄՍ հաշվառման ստանդարտների տարեկան բարելավումներ (թողարկվել է 2024թ, հուլիսին և ուժի մեջ է 2026թ. հունվարի 1-ից): ՀՀՄՍ 1-ով պարզաբանվել է, որ ՀՀՄՍ հաշվառման ստանդարտներին անցնելուց հետո հեջը պետք է դադարեցվի, եթե այն չի համապատասխանում «որակավորման չափանիշներին», այլ ոչ թե հեջի հաշվառման «պայմաններին»: Սա նպատակ ունի լուծել ՀՀՄՍ 1-ի և ՀՀՄՍ 9-ի հեջի հաշվառման պահանջների միջև անհամապատասխանության հետևանքով առաջացող հնարավոր տարբերությունը: ՀՀՄՍ 7-ով պահանջվում են օգուտի կամ վնասի բացահայտումներ՝ կապված այն ֆինանսական ակտիվների ապահանջման հետ, որտեղ կազմակերպությունը ունի ընթացիկ մասնակցություն, այդ թվում, պահանջվում է բացահայտել՝ արդյոք իրական արժեքի չափումները ներառում են «նշանակալի ծավալով ոչ դիտարկելի մուտքային տվյալներ»: Այս նոր ձևակերպումը փոխարինում է «նշանակալի մուտքային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա» արտահայտությանը: Փոփոխության նպատակն է՝ ձևակերպումը համապատասխանեցնել ՀՀՄՍ 13-ին: Բացի այդ, պարզաբանվել են ՀՀՄՍ 7-ի կիրառման ուղեցույցի որոշ օրինակներ և ավելացվել է տեքստ առ այն, որ օրինակները հնարավոր է՝ չարտացոլեն ՀՀՄՍ 7-ի նշված պարբերությունների բոլոր պահանջները: ՀՀՄՍ 16-ում կատարվել է փոփոխություն՝ պարզաբանելով, որ երբ վարձակալը որոշում է, որ վարձակալության գծով պարտավորությունը մարվել է համաձայն ՀՀՄՍ 9-ի, ապա վարձակալը պետք է կիրառի ՀՀՄՍ 9-ի ուղեցույցը՝ արդյունքում առաջացող շահույթը կամ վնասը ճանաչելու համար: Այս պարզաբանումը վերաբերում է վարձակալության գծով պարտավորություններին, որոնք մարվել են կազմակերպության կողմից այդ փոփոխությունը առաջին անգամ կիրառելու հաշվետու տարեկան ժամանակաշրջանի սկզբում կամ դրանից հետո: ՀՀՄՍ 9-ի և ՀՀՄՍ 15-ի միջև անհամապատասխանությունը վերացնելու նպատակով այժմ պահանջվում է, որ առևտրային դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվեն «ՀՀՄՍ 15-ի կիրառման միջոցով որոշված գումարով» այլ ոչ թե «գործարքի գնով» (ինչպես սահմանված է ՀՀՄՍ 15-ում): ՀՀՄՍ 10-ի փոփոխությամբ օգտագործելով պակաս միանշանակ ձևակերպում «դե-ֆակտո գործակալ» հանդիսացող կազմակերպության համար, և պարզաբանվել է, որ ՀՀՄՍ 10-ի Բ74 պարագրաֆում նկարագրված հարաբերությունը միայն մեկ օրինակ է այն հանգամանքներից, որոնց դեպքում պահանջվում է դատողություն՝ որոշելու, թե արդյոք կողմը հանդես է գալիս որպես դե ֆակտո գործակալ: ՀՀՄՍ 7-ում կատարվել է ճշտում՝ հեռացվել են «ինքնարժեքի մեթոդի» վկայակոչումները, որը հանվել է ՀՀՄՍ հաշվառման ստանդարտներից 2008թ. մայիսին, երբ ՀՀՄՍԽ-ն հրապարակեց «Ներդրման արժեքը դուստր ձեռնարկությունում, համատեղ վերահսկվող կազմակերպությունում կամ ասոցիացված կազմակերպությունում»:

Բացառությամբ վերը նշված դեպքերի, չի ակնկալվում, որ սույն նոր ստանդարտներն ու մեկնաբանությունները որևէ էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

7 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի փոփոխությունները ներկայացված են ստորև.

Հազ. ՀՀ դրամ	Գրասենյակային սարքավորումներ	Փոխադրա- միջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական արժեքն առ 1 հունվարի 2023թ.	211,468	57,760	26,140	295,368
Կուտակված մաշվածություն առ 1 հունվարի 2023թ.	(123,914)	(12,762)	(11,461)	(148,137)
Հաշվեկշռային արժեքն առ 1 հունվարի 2023թ.	87,554	44,998	14,679	147,231
Ավելացումներ Մաշվածության գծով ծախս	1,377 (31,652)	- (10,463)	7,099 (2,643)	8,476 (44,758)
Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2023թ.	57,279	34,535	19,135	110,949
Սկզբնական արժեքն առ 31 դեկտեմբերի 2023թ.	212,845	57,760	33,239	303,844
Կուտակված մաշվածություն առ 31 դեկտեմբերի 2023թ.	(155,566)	(23,225)	(14,104)	(192,895)
Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2023թ.	57,279	34,535	19,135	110,949
Ավելացումներ Օտարումներ Մաշվածության գծով ծախս	2,789 - (29,989)	- - (10,396)	227 (108) (3,429)	3,016 (108) (43,814)
Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2024թ.	30,079	24,139	15,825	70,043
Սկզբնական արժեքն առ 31 դեկտեմբերի 2024թ.	215,634	57,760	33,358	306,752
Կուտակված մաշվածություն առ 31 դեկտեմբերի 2024թ.	(185,555)	(33,621)	(17,533)	(236,709)
Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2024թ.	30,079	24,139	15,825	70,043

8 Ներդրումային գույք

Հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Ներդրումային գույք իրական արժեքով՝ առ 1 հունվարի	17,502,230	17,047,561
Ավելացումներ	-	78,720
Օտարումներ	-	(4,716)
Իրական արժեքի օգուտներ	754,804	380,665
Ներդրումային գույք իրական արժեքով՝ առ 31 դեկտեմբերի	18,257,034	17,502,230

Ներդրումային գույքը գնահատվում է տարեկան հիմունքով՝ դեկտեմբերի 31-ի դրությամբ իրական արժեքով՝ դեկլարության կողմից, որն ունի համապատասխան մասնագիտական փորձ և հմտություններ Հայաստանի Հանրապետությունում գույքի գնահատումն իրականացնելու համար:

8 Ներդրումային գույք (շարունակություն)

Ներկա տնտեսական միջավայրում Ընկերության հիմնական շուկաներում գույքային գործարքների հաճախականությունը ցածր է: Ղեկավարության գնահատմամբ՝ չկա բավարար շուկայական գործունեություն, որը թույլ կտար ստանալ համանման գույքով բնականոն գործարքների գծով համադրելի գներ Ընկերության ներդրումային գույքի իրական արժեքը որոշելու նպատակով, քանի որ այդ տեղեկատվությունը անմիջականորեն մատչելի չէ: Այս գույքի դեպքում, գնահատման համար հիմնականում հիմք են ծառայել դրամական միջոցների զեղչված հոսքերի կանխատեսումները՝ հիմնված ապագա դրամական հոսքերի հուսալի գնահատականների վրա, և հիմնավորված ցանկացած համանման վարձակալության և այլ պայմանագրերի պայմաններով, և արտաքին վկայություններով, ինչպիսիք են ընթացիկ շուկայական վարձակալության պայմանները համադրելի, համանման տեղադիրքում և վիճակում գտնվող գույքի համար, և օգտագործելով զեղչված դրույքաչափերը, որոնք արտացոլում են դրամական միջոցների հոսքերի գումարների և ժամկետների հետ կապված անորոշությունների ընթացիկ շուկայական գնահատումները:

Շահույթում կամ վնասում ճանաչված ուղղակի գործառնական ծախսերը ներառում են 306,020 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 297,852 հազ. ՀՀ դրամ)՝ այն ներդրումային գույքի գծով, որն առաջացրել է վարձակալությունից եկամուտ:

Ողջ ներդրումային գույքը օգտագործման մեջ է գտնվել 2024թ. և 2023թ.: Գույքի շահագործումը շարունակելու համար այն պետք է համապատասխանի կիրառելի առողջության և անվտանգության և բնապահպանական այլ պահանջներին, որոնք ենթակա են շարունակական հիմունքով ինքնուրույն հավաստագրման՝ անկախ վերահսկող մարմինների պարբերական ստուգումների: Ղեկավարությունը գտնում է, որ Ընկերության գույքը ըստ էության համապատասխանում է բոլոր կիրառելի պահանջներին, և Ընկերության պատմական փորձի հիման վրա ակնկալվում է, որ բոլոր գույքերի գծով կշարունակեն ստացվել համապատասխան հաստատումները՝ դրանց անընդմեջ օգտագործումը ապահովելու համար:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, 18,257,034 հազ. ՀՀ դրամի չափով (2023թ.՝ գրավադրված որպես ապահովության միջոց՝ 17,502,230 հազ. ՀՀ դրամի չափով) որպես փոխառությունների ապահովության միջոց երրորդ կողմին գրավադրված ներդրումային գույքի նկատմամբ գրավը վերացվել է, քանի որ փոխառությունների ամբողջ գումարը մարվել է տարվա ընթացքում: (Ծանոթագրություն 22):

Այն դեպքում, երբ Ընկերությունը հանդես է գալիս որպես վարձատու, ներդրումային գույքի գործառնական վարձակալության արդյունքում ստացվելիք ապագա նվազագույն վարձակալական վճարները հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
1 տարի	2,451,714	2,347,328
2 տարի	2,465,936	2,438,500
3 տարի	2,474,876	2,445,779
4 տարի	2,597,300	2,452,660
5 տարի	2,640,473	2,459,818
Ավելի քան 5 տարի	5,448,783	7,543,552

Ընդամենը ստացման ենթակա չզեղչված վճարներ գործառնական վարձակալության գծով առ 31 դեկտեմբերի	18,079,082	19,687,637
--	-------------------	-------------------

Ներդրումային գույքի վարձակալությունից եկամուտը կազմել է 2,381,755 հազ. ՀՀ դրամ (2024թ.՝ 2,242,054 հազ. ՀՀ դրամ):

Ներդրումային գույքը վարձակալներին տրվում է գործառնական վարձակալության ներքո՝ ամսական վճարման ենթակա վարձավճարներով: Որոշ պայմանագրերի համար վարձակալական վճարները ներառում են արժույթի արժեզրկման հիմքով ավելացումներ և նվազումներ, սակայն չկան այլ փոփոխական վարձակալական վճարներ, որոնք կախված են որևէ ինդեքսից կամ դրույքաչափից: Այն դեպքերում, երբ անհրաժեշտ է, պարտքային ռիսկը նվազեցնելու համար Ընկերությունը վարձակալներից ստանում է երաշխիքային դեպոզիտներ վարձակալության ժամկետի համար:

Թեև Ընկերության համար առկա է մնացորդային արժեքի փոփոխության ռիսկ ընթացիկ վարձակալության ավարտին, Ընկերությունը սովորաբար կնքում է նոր գործառնական վարձակալության պայմանագրեր և, հետևաբար, անմիջապես չի իրացնելու մնացորդային արժեքի որևէ նվազում այդ վարձակալության պայմանագրերի ավարտին: Ապագա մնացորդային արժեքների վերաբերյալ ակնկալիքներն արտացոլվում են գույքի իրական արժեքում:

«Կամար բիզնես սենթր» ՓԲԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2024թ.

9 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Առևտրային դեբիտորական պարտքեր	219,072	178,792
Հանած՝ պարտքային կորստի գծով պահեստ	-	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի կազմում	219,072	178,792
Կանխավճարներ	12,378	7,275
Հարկային կանխավճարներ	6,431	11,808
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր առ 31 դեկտեմբերի	237,881	197,875

Առևտրային դեբիտորական պարտքերը 219,072 հազ. ՀՀ դրամի չափով (2023թ.՝ 178,792 հազ. ՀՀ դրամ) գործառնական վարձակալության գծով են:

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման համար Ընկերությունն օգտագործում է ՖՀՄՍ 9-ով նախատեսված պարզեցված մոտեցումը, համաձայն որի օգտագործվում է բոլոր առևտրային դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների համար գնահատված պահուստը ամբողջ ժամկետի համար:

Ակնկալվող պարտքային կորուստների չափման համար առևտրային դեբիտորական պարտքերը խմբավորվել են՝ ելնելով ընդհանուր պարտքային ռիսկի բնութագրերից և ժամկետանց օրերի քանակից:

Ակնկալվող կորստի դրույքաչափերի համար հիմք են ծառայում յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին Նախորդող 36-ամսյա ժամանակահատվածում հաճախորդների վճարման օրինաչափությունները և այդ ժամանակահատվածում համապատասխան վարկային կորուստների պատմական տվյալները: Կորուստների պատմական տվյալները ճշգրտվում են՝ արտացոլելու համար ընթացիկ և կանխատեսումային տեղեկատվությունը մակրոտնտեսական գործոնների վերաբերյալ, որոնք ազդում են հաճախորդների դեբիտորական պարտքերի մարման կարողության վրա:

Համախառն գումարի նկատմամբ %-ային արտահայտությամբ (Հազ. ՀՀ դրամ)	31 դեկտեմբերի 2024թ.				31 դեկտեմբերի 2023թ.			
	Կորստի դրույքաչափ	Համախառն հաշվեկշռային արժեք	ԱՊԿ ողջ ժամկետի համար	Չուտ հաշվեկշռային արժեք	Կորստի դրույքաչափ	Համախառն հաշվեկշռային արժեք	ԱՊԿ ողջ ժամկետի համար	Չուտ հաշվեկշռային արժեք
Առանձին պահուստներ								
- Ամերիաբանկ ՓԲԸ	0%	131,595	-	131,595	0%	130,739	-	130,739
- Այլ	0%	87,477	-	87,477	0%	48,053	-	48,053
Ընդամենը	0%	219,072	-	219,072	0%	178,792	-	178,792

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է առևտրի և այլ դեբիտորական մնացորդների վարկային որակը՝ հիմնված պարտքային ռիսկի դասակարգերի վրա՝ 2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

Հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Ba2 (Moody's)	131,595	130,739
Չվարկանշված	87,477	48,053
Ընդամենը առևտրային դեբիտորական պարտքեր	219,072	178,792

10 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Ցպահանջ բանկային մնացորդներ	28,287	201,413

Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ առ 31 դեկտեմբերի	28,287	201,413
--	---------------	----------------

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է դրամական միջոցների և դրանց համարժեքների մնացորդների վարկային որակը՝ ըստ պարտքային ռիսկի դասերի, 2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Aa3 (Moody's)	-	114,075
Ba2 (Moody's)	28,287	87,338

Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	28,287	201,413
---	---------------	----------------

Ընկերության դրամական միջոցները և դրանց համարժեքները արտահայտված են հետևյալ արժույթներով.

Հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Դրամական միջոցները և դրանց համարժեքները՝ արտահայտված.		
- ԱՄՆ դոլար	2,383	81,539
- Եվրո	3,545	83,427
- ՀՀ դրամ	22,359	36,447

Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ առ 31 դեկտեմբերի	28,287	201,413
--	---------------	----------------

11 Բաժնետիրական կապիտալ

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բաժնետոմսերի ընդհանուր հաստատված քանակը կազմել է 79,281,131 բաժնետոմս (2023թ.՝ 79,281,131 բաժնետոմս)՝ մեկ բաժնետոմսի դիմաց 97 ՀՀ դրամ անվանական արժեքով (2023թ.՝ մեկ բաժնետոմսի դիմաց 97 ՀՀ դրամ): Բոլոր թողարկված սովորական բաժնետոմսերը ամբողջությամբ վճարված են: Յուրաքանչյուր սովորական բաժնետոմս տալիս է մեկ ձայնի իրավունք: Տարվա ընթացքում հայտարարագրված և վճարված շահաբաժինները եղել են զրոյական (2023 թ.՝ զրոյական): Մեկ բաժնետոմսի դիմաց շահաբաժինը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է զրո (2023թ.՝ զրո):

12 Վարկեր և փոխառություններ

Ընկերությունը պահպանել է բոլոր վարկային պայմանագրերի պայմանները 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վարկերի և փոխառությունների ամբողջ գումարը մարվել է (2023թ.՝ վարկերի և փոխառությունների ամբողջ գումարը բաժանվել և դասակարգվել է որպես ընթացիկ և ոչ ընթացիկ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ) (Ծանոթագրություն 22):

Ընկերության վարկերը և փոխառությունները արտահայտված են հետևյալ արժույթներով.

Հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
<i>Ոչ ընթացիկ վարկեր և փոխառություններ.</i>		
- ԱՄՆ դոլար	-	851,499
- Եվրո	-	742,435
<i>Ընթացիկ վարկեր և փոխառություններ.</i>		
- ԱՄՆ դոլար	-	67,336
- Եվրո	-	63,227
Ընդամենը վարկեր և փոխառություններ առ 31 դեկտեմբերի	-	1,724,497

12 Վարկեր և փոխառություններ (շարունակություն)

ԱՄՆ դոլարով արտահայտված բանկային վարկի մարման ժամկետ է սահմանվել 2025թ. մարտի 4-ը, սակայն այն ամբողջությամբ մարվել է 2024թ. ընթացքում՝ տարեկան 7% տոկոսադրույքով (2023թ.՝ տարեկան 7%): Եվրոյով արտահայտված բանկային վարկի մարման ժամկետ է սահմանվել 2025թ. մարտի 5-ը, սակայն այն ամբողջությամբ մարվել է 2024թ. ընթացքում՝ տարեկան EURIBOR+3% տոկոսադրույքով (2023թ.՝ տարեկան EURIBOR+3% տոկոսադրույքով):

Որպես փոխառությունների ողջ գումարի ապահովության միջոց երրորդ կողմին գրավադրված ներդրումային գույքի նկատմամբ գրավը վերացվել է, (2023թ.՝ Ներդրումային գույքը գրավադրված է եղել որպես փոխառությունների ողջ գումարի ապահովության միջոց՝ 17,502,230 հազ. ՀՀ դրամի չափով) (Ծանոթագրություն 22):

Ընկերությունը չի կիրառում հեջավորման հաշվառում և չի կնքել որևէ հեջավորման պայմանագրեր իր արտարժույթային պարտավորությունների կամ տոկոսադրույքների գծով:

Ընթացիկ փոխառությունների իրական արժեքը մոտ է դրանց հաշվեկշռային արժեքին:

13 Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորությունների համեմատություն

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական գործունեությունից բխող պարտավորությունների և ֆինանսական գործունեությունից բխող՝ Ընկերության պարտավորությունների շարժի վերլուծությունը ներկայացված ժամանակաշրջաններից յուրաքանչյուրի համար: Սրանք այն պարտավորություններն են, որոնք դրամական միջոցների հոսքերի հաշվետվությունում ներկայացվում են որպես ֆինանսական պարտավորություններ.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	2024թ. Փոխառություններ	2023թ. Փոխառություններ
Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորություններ առ 1 հունվարի	1,724,497	2,896,204
Դրամական միջոցների հոսքեր		
Մայր գումարի մարումներ	(1,593,881)	(1,230,094)
Տոկոսավճարներ	(119,134)	(171,592)
Ոչ դրամական փոփոխություններ		
Տոկոսների հաշվեգրում	60,285	154,027
Արտարժույթի փոխարկումից տարբերություններ	(68,936)	79,419
Այլ	(2,831)	(3,467)
	1,724,497	
Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորություններ առ 31 դեկտեմբերի	-	1,724,497

14 Պարտավորությունների և ծախսերի գծով պահուստներ

Ստորև ներկայացված է 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար պարտավորությունների և ծախսերի գծով պահուստների շարժը.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Իրավական հայցեր	Այլ	Ընդամենը
Հաշվեկշռային արժեքն առ 1 հունվարի 2024թ.	1,214,689	65,120	1,279,809
Շահույթին կամ վնասին վերագրվող ավելացումներ	-	25,825	25,825
Պահուստի օգտագործում	-	(19,037)	(19,037)
Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2024թ.	1,214,689	71,908	1,286,597

14 Պարտավորությունների և ծախսերի գծով պահուստներ (շարունակություն)

Ստորև ներկայացված է 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար պարտավորությունների և ծախսերի գծով պահուստների շարժը.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	Իրավական հայցեր	Այլ	Ընդամենը
Հաշվեկշռային արժեքն առ 1 հունվարի 2023թ.	1,214,689	31,185	1,245,874
Շահույթին կամ վնասին վերագրվող ավելացումներ	-	59,763	59,763
Պահուստի օգտագործում	-	(25,828)	(25,828)
Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2023թ.	1,214,689	65,120	1,279,809

Վերոնշյալ բոլոր պահուստները դասակարգվել են որպես ընթացիկ պարտավորություններ, քանի որ Ընկերությունը չունի անվերապահ իրավունք հետաձգել դրանց վճարումը մեկ տարուց ավելի ուշ: Դրամական միջոցների արտահոսքի ակնկալվող ժամկետները ներկայացված են ստորև:

Իրավական պահանջներ. Ընկերությունը 2017թ. հունվարին առաջին ատյանի դատարանում հայց է ներկայացրել կապալառուի դեմ՝ ի լրումն այլ տույժերի՝ պայմանագրային պարտավորությունները չկատարելու պատճառով (կապալառուի դեմ պահանջի ընդհանուր գումարը կազմում է 1,780,820 հազ. ՀՀ դրամ): Կապալառուն հակընդդեմ հայց է ներկայացրել ընդհանուր իրավասության դատարան՝ ներդրումային գույքի կառուցման աշխատանքների դիմաց 1,615,784 հազ. ՀՀ դրամի չափով արգելանք դնելու մասին:

2019թ. ընթացքում առաջին ատյանի դատարանը վճիռ է կայացրել հօգուտ կապալառուի, որը հետագայում բողոքարկվել է Ընկերության կողմից վերաքննիչ դատարանում: Վերաքննիչ դատարանը մերժել է առաջին ատյանի դատարանի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության: Հաշվի առնելով 2019թ. տեղի ունեցած այս զարգացումները և առաջին ատյանի դատարանի որոշումը մերժելու պատճառները՝ ղեկավարությունը գնահատել է ֆինանսական միջոցների հավանական արտահոսք, ուստի համապատասխան պահուստ է ճանաչվել հակընդդեմ հայցի ընդհանուր գումարի չափով՝ համաձայն ՀՀՍՍ 37 «Պահուստներ, պայմանական պարտավորություններ և պայմանական ակտիվներ» ստանդարտի:

Պահուստը ճանաչվել է հայցադիմումի ընդհանուր գումարով (1,615,784 հազ. ՀՀ դրամ)՝ հանած Ընկերության կողմից կապալառուին կատարած կանխավճարը (401,095 հազ. ՀՀ դրամ):

Հայցը ներկայացվել է Ընկերության դեմ բաժնետոմսերի՝ «Ameria Group (CY) Limited»-ի կողմից տիրապետման ժամանակ: 2019թ. օգոստոսի 6-ի բաժնետոմսերի գնման պայմանագրով Ameria Group (CY) Limited -ը համաձայնել է փոխհատուցել վերը նշված դատական գործի անբարենպաստ ելքի հետ կապված ցանկացած ծախս: Այսպիսով, Ընկերությունը ճանաչել է համարժեք չափով փոխհատուցվող ակտիվ: 2020թ. սեպտեմբերի 8-ին «Ameria Group CY Limited»-ը անվանափոխվել է «Imast Group (Cy) Limited»-ի:

2020թ. գործի նոր քննության արդյունքում կապալառուի կողմից ներկայացված հայցադիմումի դատական որոշումը մասնակիորեն կարճվել է, իսկ մյուս մասով հայցադիմումը կասեցվել է: 2022թ. հունվարի 8-ին լրացել է դատավճռի բողոքարկման ժամկետը: Դատարանի որոշումը մտել է օրինական ուժի մեջ, որից հետո վերսկսվել է կասեցված մյուս դատական գործերի վարույթը, որն այնուհետև կրկին կասեցվել է տեխնիկական քննության իրականացման նպատակով: 2024թ. որևէ էական իրադարձություն տեղի չի ունեցել, որը կհանգեցնի պահուստի և համապատասխան փոխհատուցման ակտիվի չեղարկմանը:

Փոխհատուցվող ակտիվի գծով 93,072 հազ. ՀՀ դրամ պարտքային կորստի պահուստը հակադարձվել է (2023թ.՝ հակադարձվել է 93,072 հազ. ՀՀ դրամ), ինչը պայմանավորված է մի շարք գործոններով, մասնավորապես, մոդելի հիմքում ընկած ենթադրությունների փոփոխությունները, ներառյալ պարտազանցման հավանականության, պարտազանցման ժամանակ գործիքի արժեքի և պարտազանցման դեպքում ակնկալվող պարտքային կորստի փոփոխությունները ժամանակաշրջանի ընթացքում, որոնք բխում են ԱՊԿ մոդելի տվյալների թարմացումից:

15 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Առևտրային կրեդիտորական պարտքեր	37,812	31,176
Պարտավորություններ ձեռքբերված հիմնական միջոցների գծով	54,616	68,827
ՄՍ-ի բարելավման համար վերանորոգման ծախսերի պարտավորություններ	-	77,000
Ընդամենը ֆինանսական կրեդիտորական պարտք առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի կազմում	92,428	177,003
Վճարման ենթակա հարկեր	34,322	35,886
Այլ կրեդիտորական պարտքեր	10,044	10,044
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր առ 31 դեկտեմբերի	136,794	222,933

Ձեռքբերված հիմնական միջոցների գծով 34,176 հազ. ՀՀ դրամի պարտավորությունները (2023թ.՝ 48,387 հազ. ՀՀ դրամ) և ներդրումային գույքի բարելավման և վերանորոգման ծախսերը՝ գրո ՀՀ դրամ (2023թ.՝ 77,000 հազ. ՀՀ դրամ) ոչ ընթացիկ պարտավորություններ են:

16 Վարձակալական դեպոզիտներ

Ընկերությունը վարձակալներից ստացել է երկարաժամկետ երաշխիքային դեպոզիտներ՝ 678,434 հազ. ՀՀ դրամի չափով (2023թ.՝ 643,346 հազ. ՀՀ ՀՀ դրամ) և վարձակալներից կարճաժամկետ երաշխիքային դեպոզիտներ՝ գրո ՀՀ դրամ (2023թ.՝ 16,373 հազ. ՀՀ դրամ): Այս դեպոզիտները ենթակա չեն վերադարձման և հաշվանցվելու են վարձակալության ժամկետի վերջին երկու, երեք կամ չորս ամիսների դիմաց՝ կախված վարձակալի հետ կնքված պայմանագրից:

17 Վարձակալական եկամուտ

Բոլոր վարձակալության եկամուտները ճանաչվում են ժամանակի ընթացքում (2023 թ.՝ ժամանակի ընթացքում): Վարձակալությունից ստացված եկամուտը բաշխվում է հետևյալ կերպ.

Հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Վարձակալական եկամուտ տարածքների վարձակալությունից	2,322,227	2,182,068
Վարձակալական եկամուտ համաժողովների դահլիճների վարձակալությունից	59,528	58,353
Վարձակալական եկամուտ կայանատեղիների վարձակալությունից	-	1,633
Ընդամենը վարձակալական եկամուտ	2,381,755	2,242,054

Յուրաքանչյուր վարձակալ փոխհատուցում է իրեն վերագրվող կոմունալ ծառայությունների արժեքը:

18 Եկամուտները և ծախսերը ըստ բնույթի

Գույքի շահագործման ծախսեր

Հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Կոմունալ ծառայություններ	87,665	73,918
Ինժեներական և տեխնիկական հսկողության ծախսեր	75,000	80,125
Անվտանգության ծախսեր	60,833	46,208
Մաքրման ծախսեր	19,998	20,284
Մաշվածության գծով ծախս	14,622	14,548
Գույքի ընթացիկ սպասարկում	12,299	8,199
Օդափոխման համակարգի ծախսեր	7,448	5,470
Վերելակների սպասարկման ծախսեր	4,869	5,050
ՏՏ և անվտանգության համակարգերի սպասարկում	4,707	5,190
Ընթացիկ վերանորոգման ծախսեր	4,622	12,324
Այլ ծախսեր	13,957	26,536
Ընդամենը գույքի շահագործման ծախսեր	306,020	297,852

14 Եկամուտները և ծախսերը ըստ բնույթի (շարունակություն)

Վարչական ծախսեր

Հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Անձնակազմի գծով ծախսեր	253,595	276,512
Ապահովագրական ծախսեր	30,015	25,672
Մաշվածություն և ամորտիզացիա	29,181	30,201
Շուկայավարման և խորհրդատվական ծախսեր	20,088	12,789
Չփոխհատուցվող հարկեր	18,330	12,991
Կոմունալ ծախսեր	3,607	3,394
Ներկայացուցչական ծախսեր	3,182	674
Կորուստ արժույթի փոխարկումից	2,325	17,690
Այլ ծախսեր	6,622	5,116
Ընդամենը վարչական ծախսեր	366,945	385,039

Անձնակազմի գծով ծախսերը ներառում են պարտադիր կենսաթոշակային հիմնադրամի հատկացումներ՝ 3,106 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 2,774 հազ. ՀՀ դրամ):

Այլ եկամուտներ

Հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Այլ վարձակալական եկամուտ	9,518	9,543
Տուգանքներից եկամուտ	629	527
Այլ	18	-
Ընդամենը այլ եկամուտ	10,165	10,070

Այլ օգուտ/(վնաս), զուտ

Հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Արտարժույթի փոխանակումից զուտ օգուտ /(վնաս)	(11,756)	2,351
Այլ	(967)	(8,174)
Ընդամենը այլ օգուտ/(վնասներ), զուտ	(12,723)	(5,823)

19 Ֆինանսական ծախսեր

Հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Վարկերի և փոխառությունների գծով տոկոսային ծախսեր	60,285	154,027
Երկարաժամկետ կրեդիտորական պարտքերի գծով գեղջի չեղարկում	7,811	9,404
Փոխառությունների գծով փոխարժեքային տարբերություններից վնաս՝ հանած օգուտ	-	79,419
Ընդամենը ֆինանսական ծախսեր	68,096	242,850

20 Ֆինանսական եկամուտ

Հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Տոկոսային եկամուտ բանկային հաշիվների և ավանդների գծով	2,831	5,794
Փոխարժեքային տարբերությունից օգուտ՝ հանած վնաս փոխառություններից	68,936	-
Ընդամենը ֆինանսական եկամուտ	71,767	5,794

21 Շահութահարկ

(ա) Շահութահարկի գծով ծախսի բաղադրիչները

Շահույթում կամ վնասում ճանաչված շահութահարկի գծով ծախսը ներառում է հետևյալ բաղադրիչները.

Հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Ընթացիկ հարկ	169,531	128,899
Հետաձգված հարկ	269,093	204,934
Տարվա շահութահարկի գծով ծախս	438,624	333,833

(բ) Կիրառելի հարկադրույքով բազմապատկած շահույթի կամ վնասի և շահութահարկի գծով ծախսի համադրում

Ընկերության 2024թ. հարկվող շահույթի գծով կիրառելի շահութահարկի դրույքաչափը 18% է (2023թ.՝ 18%): Հարկերի գծով ծախսի ակնկալվող և իրական մեծությունների միջև համեմատագրումը ներկայացված է ստորև.

Հազ. ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Շահույթ մինչև հարկումը	2,464,707	1,802,220
Տեսական հարկային ծախսը՝ սահմանված 18% դրույքաչափով	(443,647)	(324,400)
Հարկային առումով չնվազեցվող կամ չհարկվող գործարքների ազդեցությունը.		
- Չհարկվող եկամուտ	17,159	30,778
- Չնվազեցվող ծախսեր	(12,136)	(40,211)
Տարվա շահութահարկի գծով ծախս	(438,624)	(333,833)

(գ) Հետաձգված հարկերի վերլուծությունն ըստ ժամանակավոր տարբերության տեսակի

ՖՀՄՍ-ի և ՀՀ հարկային օրենսդրության միջև եղած տարբերություններն առաջացնում են ժամանակավոր տարբերություններ՝ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման նպատակով որոշվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկման նպատակով որոշվող դրանց գումարների միջև: Այդ ժամանակավոր տարբերություններում շարժի հարկային հետևանքը մանրամասն ներկայացված է ստորև և համեմատագրումը կատարված է 18% դրույքաչափով (2023թ.՝ 18%):

21 Շահութահարկ (շարունակություն)

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	1 հունվարի 2024թ.	Ծախսագրված/ (կրեդիտագրված) շահույթին կամ վնասին	31 դեկտեմբերի 2024թ.
Նվազեցվող/(հարկվող) ժամանակավոր տարբերությունների հարկային հետևանքը			
Ներդրումային գույք	(1,390,394)	(261,580)	(1,651,974)
Հիմնական միջոցներ	9,509	(709)	8,800
Հետաձգված վարձակալական եկամուտ	(27,383)	(6,874)	(34,257)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	18,768	75	18,843
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	93,345	(5)	93,340
Չուտ հետաձգված հարկային պարտավորություն	(1,296,155)	(269,093)	(1,565,248)

Ժամանակավոր տարբերություններում շարժի հարկային հետևանքը 31 դեկտեմբերի 2023թ. համար մանրամասն ներկայացված է ստորև.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	1 հունվարի 2023թ.	Ծախսագրված/ (կրեդիտագրված) շահույթին կամ վնասին	31 դեկտեմբերի 2023թ.
Նվազեցվող/(հարկվող) ժամանակավոր տարբերությունների հարկային հետևանքը			
Ներդրումային գույք	(1,181,945)	(208,449)	(1,390,394)
Հիմնական միջոցներ	10,951	(1,442)	9,509
Հետաձգված վարձակալական եկամուտ	(30,517)	3,134	(27,383)
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	16,951	1,817	18,768
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	93,339	6	93,345
Չուտ հետաձգված հարկային պարտավորություն	(1,091,221)	(204,934)	(1,296,155)

22 Պայմանական դեպքեր և պարտավորություններ

Իրավական գործընթացներ. Ժամանակ առ ժամանակ բնականոն գործունեության ընթացքում Ընկերության դեմ կարող են ներկայացվել հայցեր: Իր գնահատականների, ինչպես նաև արտաքին մասնագիտական խորհրդատվության հիման վրա դեկլարությունը կարծում է, որ պահանջների գծով ոչ մի էական վնաս չի կարող կրել, որը կգերազանցի սույն ֆինանսական հաշվետվություններում նախատեսված պահուստները (Ծանոթագրություն 14):

Հարկային օրենսդրություն. Հայաստանի Հանրապետության հարկային և մաքսային օրենսդրությունը ենթակա է տարբեր մեկնաբանությունների և փոփոխությունների, որոնք կարող են հաճախակի տեղի ունենալ: Ղեկավարության կողմից այդ օրենսդրության մեկնաբանումը՝ Ընկերության գործարքների և գործունեության հանդեպ կիրառման առումով կարող է վիճարկվել համապատասխան մարմինների կողմից:

Հարկային մարմիններն օրենսդրության մեկնաբանման և հարկային ստուգումների ընթացքում կարող են կիրառել առավել խիստ և բարդ մոտեցում: Բյուջեի կատարմանն ուղղված հարկային մուտքերի ավելացման ջանքերի հետ համատեղ, վերոնշյալը կարող է հանգեցնել հարկային մարմինների կողմից իրականացվող ստուգումների հաճախականության ու խորության աճի: Մասնավորապես, հնարավոր է, որ անցյալում խնդրահարույց չհամարված գործարքներն ու գործունեությունը վիճարկվեն: Որպես հետևանք, կարող են առաջադրվել էական ծավալի լրացուցիչ հարկեր, տուգանքներ և տուկոսներ: Հարկային ստուգումները կարող են ներառել ստուգման ամսաթվին անմիջապես նախորդող երեք օրացուցային տարիները: Որոշակի հանգամանքների դեպքում ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակահատվածներ:

22 Պայմանական դեպքեր և պարտավորություններ (շարունակություն)

Հայաստանի տրանսֆերային գնագոյացման (ՏԳ) օրենսդրությունը ընդհանուր առմամբ համահունչ է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից մշակված ՏՏ միջազգային սկզբունքներին, թեև այն ունի

որոշակի առանձնահատկություններ: ՏԳ-ի օրենսդրությունը նախատեսում է վերահսկվող գործարքների (կապակցված կողմերի միջև գործարքներ և չկապակցված կողմերի միջև որոշակի գործարքներ) լրացուցիչ հարկային ուսումնասիրության հնարավորություն, եթե այդպիսի գործարքները չեն իրականացվում պարզած ձեռքի սկզբունքով: Ղեկավարությունն իրականացրել է ներքին հսկողության գործառնություններ՝ ՏԳ գործող օրենսդրությանը համապատասխանություն ապահովելու տեսանկյունից:

Վերահսկվող գործարքներից առաջացող հարկային պարտավորությունները որոշվում են դրանց փաստացի գործարքների գների հիման վրա: Հնարավոր է, որ ՏԳ կանոնների մեկնաբանության զարգացումների ի հետ մեկտեղ, նման գները ենթակա լինեն վիճարկման: Այդպիսի մարտահրավերների ազդեցությունը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել, այնուամենայնիվ, դա կարող է էական նշանակություն ունենալ Ընկերության ֆինանսական վիճակի և/կամ գործունեության համար:

Գրավադրված և սահմանափակված ակտիվներ. 2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության հետևյալ ակտիվները եղել են գրավադրված որպես ապահովման միջոց.

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	2024թ.		2023թ.	
		Գրավադրված ակտիվ	Հարակից պարտավորություն	Գրավադրված ակտիվ	Հարակից պարտավորություն
Ներդրումային գույք	8	-	-	17,502,230	1,724,497

Համապատասխանություն պայմանագրերին. Ընկերությունը նախկինում ուներ որոշակի պայմանագրային պարտավորություններ՝ հիմնականում վարկերի և փոխառությունների գծով, որոնց չկատարումը կարող էր հանգեցնել բացասական հետևանքների, այդ թվում՝ պարտազանցման հավանականության: 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը այլևս չի ունեցել պայմանագրային պարտավորություններ՝ իր վարկերի և փոխառությունների գծով, քանի որ 2024թ. ընթացքում Ընկերությունն ամբողջությամբ մարել է իր վարկերն ու փոխառությունները (2023թ.՝ Ընկերությունը պահպանել է պայմանագրային պարտավորությունները 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ) :

23 Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ընկերությունում ռիսկերի կառավարումն իրականացվում է ֆինանսական, գործառնական և իրավական ռիսկերի ուղղություններով: Ֆինանսական ռիսկը կազմված է շուկայական ռիսկից (ներառյալ՝ արժույթային, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկը), պարտքային ռիսկից և իրացվելիության ռիսկից: Ֆինանսական ռիսկերի կառավարման առաջնային գործառնություն է ռիսկերի սահմանաչափ սահմանելը և այնուհետև ցանկացած տեսակի ռիսկերի ազդեցությունն այդ սահմանաչափում պահելը: Գործառնական և իրավական ռիսկերի կառավարման գործառնությունները նպատակ ունեն ապահովել ներքին քաղաքականության և ընթացակարգերի պատշաճ իրականացումը՝ գործառնական և իրավական ռիսկերը նվազագույնի հասցնելու համար:

Պարտքային ռիսկ. Ընկերությունը ենթարկվում է պարտքային ռիսկի, այսինքն՝ ռիսկ, երբ ֆինանսական գործիքի մի կողմը ֆինանսական վնաս է պատճառում մյուս կողմին՝ պարտավորություններ չկատարելու հետևանքով:

Պարտքային ռիսկի ենթարկվածությունը ծագում է Ընկերության կողմից վարկավորման և գործընկերների հետ այլ գործարքների արդյունքում, որոնք առաջ են բերում ֆինանսական ակտիվներ և հետհաշվեկշռային վարկային բնույթի պարտավորություններ:

Ընկերության առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկի արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում:

23 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Ընկերության կողմից պահվող վարձակալական դեպոզիտները կարող են պահվել ընկերության կողմից, եթե վարձակալներից ստացման ենթակա գումարները չմարվեն կամ տեղի ունենան այլ պայմանագրային խախտումներ:

Պարտքային ռիսկի կառավարում. Պարտքային ռիսկը Ընկերության գործունեության համար հանդիսանում է ամենամեծ ռիսկը, ուստի ղեկավարությունն ուշադիր վերահսկում է իր պարտքային ռիսկի ենթարկվածությունը:

Ռիսկերի կառավարման նպատակով պարտքային ռիսկի գնահատումը բարդ է և ենթադրում է մոդելների կիրառում, քանի որ ռիսկը փոփոխվում է՝ կախված շուկայական պայմաններից, ակնկալվող դրամական հոսքերից և ժամանակի ընթացքից: Ակտիվների պորտֆելի գծով պարտքային ռիսկի գնահատումը ենթադրում է պարտազանցման առաջացման հավանականության գնահատում, կորուստների համապատասխան գործակիցների և գործընկերների միջև պարտազանցման հարաբերակցության հետագա գնահատում:

Ընկերության ղեկավարությունը դիտարկում է չվճարված առևտրային դեբիտորական պարտքերի վերլուծությունն ըստ ժամկետայնության և միջոցներ է ձեռնարկում ժամկետանց մնացորդների մասով: Հետևաբար, ղեկավարությունը տեղին է համարում ներկայացնել պարտքային կորստի ժամկետայնության վերաբերյալ տեղեկություններ և այլ տեղեկատվություն, ինչպես ներկայացված է Ծանոթագրություն 9-ում և 10-ում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ Ընկերությունը կարծում է, որ դրամական միջոցների կորստի ռիսկը կարող է համարվել աննշան, քանի որ Ընկերության ֆինանսական միջոցների ներդրման համար ընտրված ֆինանսական հաստատությունները հուսալի և հեղինակավոր են:

Ընկերության դրամական միջոցները պահվում են Հայաստանում գործող խոշոր հեղինակավոր բանկերում:

Շուկայական ռիսկ. Ընկերությունը ենթակա է շուկայական ռիսկերի ազդեցության: Շուկայական ռիսկերն առաջանում են. (ա) արժույթի, (բ) տոկոսային ակտիվների և պարտավորությունների բաց դիրքերից, որոնք բոլորն էլ ենթարկվում են ընդհանուր և առանձնահատուկ շուկայական շարժերի: Դեկավարությունը սահմանում է ռիսկի ընդունելի մակարդակը, որը վերահսկվում է օրական կտրվածքով: Այնուհանդերձ, այս մոտեցման կիրառումը չի կանխում այս սահմանաչափերը գերազանցող վնասների առաջացումը՝ ունենում ավելի նշանակալի շուկայական շարժեր տեղի ունենալու դեպքում:

Արժույթային ռիսկ. Արտարժույթային ռիսկի առնչությամբ ղեկավարությունը սահմանում է ազդեցության մակարդակի սահմանափակումներ ըստ արժույթի և ընդհանուր առմամբ: Ստորև բերված աղյուսակը ամփոփում է հաշվետու ժամանակաշրջանի վերջում Ընկերության արտարժույթի փոխարժեքի ռիսկի ենթարկվածությունը:

Հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.			31 դեկտեմբերի 2023թ.		
	Դրամական ֆինանսական ակտիվներ	Դրամական ֆինանսական պարտավորություններ	Չուտ դիրք	Դրամական ֆինանսական ակտիվներ	Դրամական ֆինանսական պարտավորություններ	Չուտ դիրք
ԱՄՆ դոլար	2,383	-	2,383	81,539	(918,835)	(837,296)
Եվրո	3,545	-	3,545	83,427	(805,662)	(722,235)
Ընդամենը	5,928	-	5,928	164,966	(1,724,497)	(1,559,531)

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է շահույթի և վնասի զգայունությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կիրառվող փոխարժեքի հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ Ընկերության ֆունկցիոնալ արժույթի հետ հարաբերակցությամբ, բոլոր այլ փոփոխականները հաստատուն պահելով:

23 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.	31 դեկտեմբերի 2023թ.
ԱՄՆ դոլարի ամրապնդում 5%-ով (2023թ.՝ 5%-ով)	119	(41,865)
ԱՄՆ դոլարի անկում 5%-ով (2023թ.՝ 5%-ով)	(119)	41,865
Եվրոյի ամրապնդում 5%-ով (2023թ.՝ 5%-ով)	177	(36,112)
Եվրոյի անկում 5%-ով (2023թ.՝ 5%-ով)	(177)	36,112

Տոկոսադրույքի ռիսկ. Ընկերությունը ենթարկվում է շուկայական տոկոսադրույքների գերակշռող մակարդակների տատանումների ազդեցությունը իր ֆինանսական դիրքի և դրամական հոսքերի վրա: Տոկոսների մարժան կարող է աճել այդպիսի փոփոխությունների արդյունքում, բայց կարող է նվազել կամ հանգեցնել վնասների՝ անսպասելի տատանումների դեպքում: Ղեկավարությունն ամեն օր մշտադիտարկում է և սահմանում է տոկոսադրույքների վերազնահատման անհամապատասխանության մակարդակի սահմանափակումներ, որոնք կարող են ձեռնարկվել:

Տոկոսադրույքի ռիսկը կառավարվում է հիմնականում ֆիքսված տոկոսադրույքով պայմանագրերի կիրառման և տոկոսադրույքի վերանայման պայմանների վերլուծության մոնիտորինգի միջոցով:

Ստորև բերված աղյուսակը ամփոփում է Ընկերության ենթարկվածությունը տոկոսադրույքի ռիսկին: Աղյուսակում ներկայացված են Ընկերության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հանրագումարային մեծությունները հաշվեկշռային արժեքներով՝ դասակարգված ըստ պայմանագրային տոկոսների վերազնահատման կամ մարման ամսաթվերից առավել վաղ ամսաթվով:

Հազ. ՀՀ դրամ	Ցպահանջ և մինչև 3 ամիս	3-12 ամիս	12 ամիս - 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը
31 դեկտեմբերի 2024թ.					
Ֆինանսական ակտիվներ	-	-	-	-	-
Ֆինանսական պարտավորություններ	-	-	-	-	-
Չուտ տոկոսային զգայունություն առ 31 դեկտեմբերի 2024թ.	-	-	-	-	-
31 դեկտեմբերի 2023թ.					
Ֆինանսական ակտիվներ	-	-	-	-	-
Ֆինանսական պարտավորություններ	(34,398)	(28,183)	(743,081)	-	(805,662)
Չուտ տոկոսային զգայունություն առ 31 դեկտեմբերի 2023թ.	(34,398)	(28,183)	(743,081)	-	(805,662)

Եթե 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տոկոսադրույքները ցածր լինեին 200 բազիսային կետով, իսկ մնացած բոլոր փոփոխականները՝ պահպանվեին հաստատուն, ապա տարվա շահույթը կլիներ 1,905 հազ. ՀՀ դրամով ավելի բարձր՝ հիմնականում փոփոխական տոկոսային պարտավորությունների գծով ավելի ցածր տոկոսային ծախսերի արդյունքում:

Եթե տոկոսադրույքները լինեին 200 բազիսային կետով բարձր, իսկ մնացած բոլոր փոփոխականները՝ պահպանվեին հաստատուն, ապա տարվա շահույթը կլիներ 1,905 հազ. ՀՀ դրամով ավելի ցածր՝ հիմնականում փոփոխական տոկոսային պարտավորությունների գծով ավելի բարձր տոկոսային ծախսերի արդյունքում:

Ընկերությունը վերահսկում է տոկոսադրույքները իր ֆինանսական գործիքների գծով: Ստորև բերված աղյուսակը ամփոփում է տոկոսադրույքները համապատասխան հաշվետու ամսաթվի դրությամբ՝ հիմք ընդունելով առանցքային ղեկավար անձնակազմի կողմից դիտարկված հաշվետվությունները:

23 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)

Տարեկան % արտահայտությամբ	2024թ.			2023թ.		
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո
Ակտիվներ						
Տրամադրված փոխառություններ	6	-	-	6	-	-
Պարտավորություններ						
Փոխառություններ	-	7	EURIBOR+3%	-	7	EURIBOR+3%

Վերոնշյալ աղյուսակում «-» նշանը նշանակում է, որ Ընկերությունը չունի համապատասխան ակտիվներ կամ պարտավորություններ համապատասխան արժույթով:

Իրացվելիության ռիսկ. Իրացվելիության ռիսկ՝ նշանակում է, որ կազմակերպությունը կարող է դժվարանալ կատարելու պարտականությունները ֆինանսական պարտավորությունների գծով: Ընկերությունը օրական կտրվածքով առնչվում է դրամական միջոցների պահանջների:

Ընկերությունը վերլուծում է իր ակտիվների օգտագործման ժամկետները և իր պարտավորությունների մարման ժամկետները և պլանավորում է իր իրացվելիությունը՝ կախված տարբեր գործիքների գծով ակնկալվող մարումներից: Ընկերությունը կարևորում է ֆինանսական ճկունությունը: Այս առումով կարևոր է իրացվելիության ռիսկը նվազագույնի հասցնել՝ ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացված փաթեթին հասանելիություն ապահովելու միջոցով: Ընկերությունն օգտագործում է կանխիկ և վարկային միջոցներ կարճաժամկետ իրացվելիությունը կառավարելու համար: Երկարաժամկետ իրացվելիության կարիքները կառավարվում են կապիտալի շուկաներում միջոցներ հայթայթելու միջոցով:

Ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն է.

	Ցպահանջ և մինչև 3 ամիս	3-12 ամիս	12 ամիս - 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը
<i>Հազ. ՀՀ դրամ</i>					
Պարտավորություններ					
Փոխառություններ (Ծանոթագրություն 12)	-	-	-	-	-
Առևտրային կրեդիտորական պարտքեր (Ծանոթագրություն 15)	43,318	11,011	44,044	-	98,373
Ընդամենը ապագա վճարներ, ներառյալ ապագա մայր գումարի և տոկոսագումարների վճարներ	43,318	11,011	44,044	-	98,373

Ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն է.

	Ցպահանջ և մինչև 3 ամիս	3-12 ամիս	12 ամիս - 5 տարի	Ավելի քան 5 տարի	Ընդամենը
<i>Հազ. ՀՀ դրամ</i>					
Պարտավորություններ					
Փոխառություններ (Ծանոթագրություն 12)	70,444	72,530	2,090,220	-	2,233,194
Առևտրային կրեդիտորական պարտքեր (Ծանոթագրություն 15)	36,682	16,517	143,066	-	196,264
Ընդամենը ապագա վճարներ, ներառյալ ապագա մայր գումարի և տոկոսագումարների վճարներ	107,126	89,047	2,233,286	-	2,429,458

24 Կապիտալի կառավարում

Կապիտալի կառավարման առումով Ընկերության ինդիքն է՝ ապահովել Ընկերության անընդհատության հիմունքով գործելու կարողությունը, միևնույն ժամանակ բաժնետերերի համար ապահովել եկամտաբերության ընդունելի մակարդակ և պահպանել կապիտալի գծով ծախսերը նվազագույնի հասցնելու համար օպտիմալ կապիտալի կառուցվածք: Կապիտալ կառուցվածքը պահպանելու և կարգավորելու համար Ընկերությունը կարող է ճշգրտել բաժնետերերին վճարվելիք շահաբաժինների չափերը, բաժնետերերին վերադարձվող կապիտալը, ինչպես նաև թողարկել նոր բաժնետոմսեր կամ վաճառել ակտիվները՝ պարտքը նվազեցնելու նպատակով: 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից տնօրինվող կապիտալի չափը կազմել է 16,170,952 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 14,136,611 հազ. ՀՀ դրամ):

Համաձայն «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի՝ «Ընկերության հիմնադրամները և զուտ ակտիվները», Ընկերությունում պետք է ստեղծվի պահուստային հիմնադրամ՝ կանոնադրությամբ սահմանված չափով, բայց ոչ պակաս կանոնադրական կապիտալի 15 տոկոսից: Ըստ այդմ, 2024թ. ընթացքում Ընկերությունը որոշել է չբաշխված շահույթի մի մասը փոխանցել պահուստային կապիտալին՝ կանոնադրական կապիտալի 15%-ի չափով, և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պահուստային կապիտալը կազմել է 1,153,540 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ զրո):

25 Իրական արժեքի բացահայտումներ

Իրական արժեքի չափման վերլուծությունը կատարվում է ըստ իրական արժեքի հիերարխիայում մակարդակի հետևյալ կերպ՝ (i) մակարդակ 1՝ չափումներ ակտիվ շուկայում նույնական ակտիվների կամ պարտավորությունների գնանշվող (չճշգրտվող) գներով, (ii) մակարդակ 2՝ չափման գնահատման մեթոդներ, որոնցում ակտիվի կամ պարտավորության համար բոլոր էական ելակետային տվյալներն ուղղակիորեն (օրինակ՝ գներ) կամ անուղղակիորեն (օրինակ՝ գների հիման վրա ստացված) դիտելի են, (iii) մակարդակ 3՝ գնահատումներ, որոնք հիմնված չեն բացառապես շուկայի դիտելի տվյալների վրա (այն է՝ գնահատման համար անհրաժեշտ են նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալներ): Ֆինանսական գործիքները իրական արժեքի հիերարխիայի համապատասխան մակարդակին վերագրելիս՝ ղեկավարությունը կիրառում է դատողություն եթե իրական արժեքի չափման համար օգտագործվում են էական ճշգրտում պահանջող դիտարկելի տվյալներ, ապա իրական արժեքի տվյալ չափումը վերաբերում է մակարդակ 3-ին: Օգտագործվող տվյալների նշանակալիությունը գնահատվում է իրական արժեքով չափվող ամբողջության համար:

ա) Իրական արժեքի պարբերական չափումներ

Իրական արժեքի պարբերական չափումները հաշվապահական հաշվառման ստանդարտներով պահանջվող կամ թույլատրվող չափումներն են յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի ֆինանսական վիճակի հաշվետվությունում: Ստորև աղյուսակում ներկայացված են իրական արժեքի հիերարխիայի մակարդակները, որոնց միջոցով դասակարգվում են իրական արժեքի պարբերական չափումները:

Հազ. ՀՀ դրամ	2024թ. Մակարդակ 3	2023թ. Մակարդակ 3
Ոչ ֆինանսական ակտիվներ - Ներդրումային գույք	18,257,034	17,502,230
Ընդամենը ակտիվների իրական արժեքի պարբերական չափումներ առ 31 դեկտեմբերի	18,257,034	17,502,230

Գնահատման մեթոդաբանությունը, 3-րդ մակարդակի չափումների իրական արժեքի չափման մեջ օգտագործվող մուտքային տվյալները հետևյալն են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

25 Իրական արժեքի բացահայտումներ (շարունակություն)

Հազ. ՀՀ դրամ	Իրական արժեք	Գնահատման մեթոդ	Օգտագործված ելակետային տվյալներ	Ելակետային տվյալներ	
				2024թ.	2023թ.
Ոչ ֆինանսական ակտիվներ					
		Եկամտային մոտեցում՝ զեղչված դրամական միջոցների			
- Ներդրումային գույք	18,257,034	հոսքերի մեթոդով			
			Վարձակալության ցուցանիշ Միջին զբաղեցվածության ցուցանիշ	147,903	144,890
			2եղչման դրույք	100%	100%
			Աճի դրույք	13.97%	13.11%
				4.50%	4.15%
Ընդամենը իրական արժեքի պարբերական չափումներ Մակարդակ 3-ում					
	18,257,034				

Ծանոթագրություն 4-ը բացահայտում է ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գնահատման տվյալների նկատմամբ զգայունությունը, եթե չդիտարկվող տվյալներից մեկի կամ մի քանիսի փոփոխությունը՝ ողջամտորեն հնարավոր այլընտրանքային ենթադրություններն արտացոլելու նպատակով, նշանակալի չափով կփոփոխի իրական արժեքը: Այդ նպատակով նշանակալիությունը գնահատվել է շահույթի կամ վնասի, ընդհանուր ակտիվների կամ ընդհանուր պարտավորությունների տեսանկյունից, կամ երբ իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ընդհանուր սեփական կապիտալում:

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում 3-րդ մակարդակի իրական արժեքի պարբերական չափումների գնահատման եղանակներում փոփոխություններ չեն եղել: (2023թ.՝ նույնը): Ներդրումային գույքը ներկայացնում է հողատարածք և բազմահարկ բիզնես կենտրոն, որը գտնվում է Երևանի կենտրոնում:

Վերոնշյալ աղյուսակում բացահայտված իրական արժեքի չափումների զգայունությունը ցույց է տալիս այն ուղղությունը, որով համապատասխան մոտեցային փոփոխականների աճը կամ նվազումը կազդի գնահատման արդյունքի վրա:

(գ) 3 -րդ մակարդակի պարբերական և ոչ պարբերական իրական արժեքի չափումների գնահատման գործընթացները

3-րդ մակարդակի գնահատումները վերանայվում են ամսական կտրվածքով Ընկերության ֆինանսական տնօրենի կողմից: Ֆինանսական տնօրենը դիտարկում է գնահատման մոդելի տվյալների համապատասխանությունը, ինչպես նաև գնահատման արդյունքը՝ օգտագործելով գնահատման տարբեր մեթոդներ և մոտեցումներ: Գնահատման առավել նպատակահարմար մոդելն ընտրելիս տնօրենը կատարում է հետադարձ փորձարկում և հաշվի է առնում, թե որ մոդելի արդյունքներն են պատմականորեն առավելագույնը համապատասխանում իրական շուկայական գործարքներին:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ: Լողացող տոկոսադրույքով գործիքների իրական արժեքը սովորաբար դրանց հաշվեկշռային արժեքն է: Ֆիքսված տոկոսադրույքով գործիքների գնահատված իրական արժեքը հիմնված է գնահատված ապագա դրամական հոսքերի վրա, որոնք ակնկալվում է, որ կստացվեն ընթացիկ տոկոսադրույքներով համանման պարտքային ռիսկեր ունեցող և մնացորդային մարման ժամկետներով նոր գործիքների դեպքում: Օգտագործված զեղչային դրույքաչափերը կախված են գործընկերոջ պարտքային ռիսկից:

25 Իրական արժեքի բացահայտումներ (շարունակություն)

Փոխհատուցվող ակտիվների, տրված փոխառությունների, առևտրային և այլ ֆինանսական դեբիտորական պարտքերի և դրամական միջոցների և դրանց համարժեքների հաշվեկշռային գումարները մոտ են դրանց իրական արժեքին:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող պարտավորություններ: Պարտավորությունների իրական արժեքները որոշվել են գնահատման մեթոդների կիրառմամբ: Սահմանված մարման ժամկետով ֆիքսված տոկոսադրույքներով գործիքների իրական արժեքը գնահատվել է՝ հիմնվելով ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա, որոնք զեղչվել են համանման պարտքային ռիսկ և մարման մնացորդային ժամկետ ունեցող նոր գործիքների համար գործող ընթացիկ տոկոսադրույքներով: Ցպահանջ կամ ծանուցման ժամկետից հետո մարման ենթակա պարտավորությունների իրական արժեքը («ցպահանջ պարտավորություններ») գնահատվել է որպես ցպահանջ վճարման ենթակա գումար՝ զեղչված գումարի վճարման պահանջի ներկայացման առաջին հնարավոր ամսաթվից սկսած:

Վարկերի և փոխառությունների, վարձակալական դեպոզիտների և առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքները մոտ են դրանց իրական արժեքներին:

26 Ֆինանսական գործիքների ներկայացում ըստ չափման կատեգորիաների

Ընկերությունը, ՖՀՄՍ 9-ի «Ֆինանսական գործիքներ» համաձայն, դասակարգում է ֆինանսական ակտիվները հետևյալ կատեգորիաների. (ա) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, (բ) այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ և (գ) ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների համադրումը վերը նշված չափման կատեգորիաներով 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.		31 դեկտեմբերի 2023թ.	
	Ամորտիզացված արժեքով	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով	Ամորտիզացված արժեքով	Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով
Ակտիվներ				
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	28,287	-	201,413	-
Տրամադրված վարկեր	-	-	80,047	-
Ներդրումներ բաժնային արժեթղթերում	-	87,834	-	83,627
Փոխհատուցվող ակտիվ	1,214,689	-	1,214,689	-
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	237,881	-	197,875	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	1,480,857	87,834	1,694,024	83,627

2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության բոլոր ֆինանսական պարտավորությունները ներկայացված են ամորտիզացված արժեքով:

27 Փոխկապակցված կողմերի հետ մնացորդներ և գործարքներ

Կողմերը սովորաբար համարվում են փոխկապակցված, եթե դրանք գտնվում են ընդհանուր վերահսկողության տակ կամ եթե կողմերից մեկն ունի կարողություն վերահսկելու մյուս կողմին կամ կարող է ունենալ նշանակալի ազդեցություն կամ համատեղ վերահսկողություն մեկ այլ կողմի նկատմամբ՝ ֆինանսատնտեսական որոշումներ կայացնելիս: Յուրաքանչյուր հնարավոր փոխկապակցված կողմի հարաբերություն դիտարկելիս ուշադրություն է դարձվում հարաբերության բնույթի, այլ ոչ միայն իրավական ձևի վրա:

2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ փոխկապակցված կողմերի հետ մնացորդները հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.		31 դեկտեմբերի 2023թ.	
	Բաժնետեր	Համատեղ վերահսկվող ընկերություններ	Բաժնետեր	Համատեղ վերահսկվող ընկերություններ
Տրամադրված վարկեր	-	-	80,047	-
Առևտրային դեբիտորական պարտքեր	-	-	-	-
Ներդրումներ բաժնային արժեթղթերում	-	87,834	-	83,627
Հետաձգված հասույթ	-	-	-	-
Առևտրային կրեդիտորական պարտքեր	-	(1,703)	(77,000)	(294)

2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վերջնական շահառու հանդիսացող սեփականատերը վարկերի ամբողջ գումարի երաշխավորն է:

2024թ. և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ փոխկապակցված կողմերի գծով մնացորդները հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2024թ.		31 դեկտեմբերի 2023թ.	
	Բաժնետեր	Համատեղ վերահսկվող ընկերություններ	Բաժնետեր	Համատեղ վերահսկվող ընկերություններ
Հայտարարված և վճարված շահաբաժին	-	-	-	-
Վարձակալական եկամուտ	-	-	17,425	-
Տեղեկատվական, խորհրդատվական և այլ մասնագիտական ծառայություններ	5,000	1,420	5,000	804
Ֆինանսական եկամուտ	2,831	-	5,794	-
Անվտանգության ծառայություն	-	60,833	-	26,996
Ապրանքների ձեռքբերում	1,910	5,297	-	2,993
Հիմնական միջոցների գնում	-	438	-	58

Առանցքային ղեկավար անձնակազմ. Առանցքային ղեկավար անձնակազմը ներառում է տնօրենին, տեխնիկական շահագործման գծով փոխտնօրենին և գործառնական տնօրենի տեղակալին: Առանցքային ղեկավար անձնակազմի հատուցումները ներկայացված են ստորև.

27 Փոխկապակցված կողմերի հետ մնացորդներ և գործարքներ (շարունակություն)

Հազ. ՀՀ դրամ	2024թ.		2023թ.	
	Ծախս	Հաշվեգրված պարտավորություն	Ծախս	Հաշվեգրված պարտավորություն
<i>Կարճաժամկետ հատուցումներ.</i>				
- Աշխատավարձ	206,523	66,815	197,993	61,245
Ընդամենը առանցքային ղեկավար անձնակազմի հատուցում	206,523	66,815	90,697	22,334

Առանցքային ղեկավար անձնակազմի աշխատավարձերը ներառում են պարտադիր կենսաթոշակային հիմնադրամի հատկացումներ՝ 2,000 հազ. ՀՀ դրամ (2023թ.՝ 1,821 հազ. ՀՀ դրամ):

28 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Շահաբաժիններ և կանոնադրական կապիտալի համալրում. 2025թ. հունվարի 17-ին և 2025թ. ապրիլի 14-ին բաժնետերերի արտահերթ ժողովը հայտարարել է 2021թ. 2,023,177 հազ. ՀՀ դրամ զուտ շահույթից 421,052 հազ. ՀՀ դրամի և 210,600 հազ. ՀՀ դրամի չափով տարեկան շահաբաժինների վճարման մասին: Շահաբաժինների ամբողջ գումարը վճարվել է մինչև այս ֆինանսական հաշվետվությունների կազմման ամսաթիվը:

2025 թվականի հունվար և ապրիլ ամիսներին Բաժնետերերի արտահերթ ժողովը որոշել է կանոնադրական կապիտալը համալրել համապատասխանաբար 23,784 հազար և 11,099 հազար ՀՀ դրամով՝ հայտարարված և վճարված շահաբաժիններից: Այսպիսով, արդեն տեղաբաշխված 79,281,131 բաժնետոմսերի անվանական արժեքը աճել է մինչև 7,725,153 հազ. ՀՀ դրամ:

Տրամադրված վարկեր. 2025թ. փետրվարի 24-ից մինչև 2025թ. մարտի 3-ը կապակցված կողմերին տրամադրվել են նոր վարկեր՝ 24,000 հազ. ՀՀ դրամի չափով և 2025թ. ապրիլի 21-ից մինչև 2025թ. մայիսի 15-ը 50,000 հազ. ՀՀ դրամի չափով, որոնք մասամբ մարվել են Ընկերությանը մինչև 2025թ. ապրիլի վերջը: